

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԼԵԶՈՒՄԱՆԱԿԱՆ. Տարագարձ եւ Տարաձայն..... ՏԻՐԱՅՐ
 ՆՈՐԱՎԷՊ. Մեծ հարսանիք ժը. Օրհորդի մ'օրաթերթէն քաղեալ յիշատա-
 րիքը «ԼԻՒՏՕՎԻՔ ՀԱՆԷՎԻ» թարգմ. Թ. ԹԵՐԶԵԱՆ
 ԳԻՏԱԿԱՆ. Զեռքն եւ շարժումն «ԷՕԺԷՆ ՄՈՒԹՈՆ»..... ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ
 ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. Ճանապարհորդական նկատողութիւնք.....
 ԶԱՆԱԶԱՆՔ. Գորմանիոյ Ոււիճէլմ կայսրն.....
 ՔԱՂԱՍԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ. Արտաբն, Ներքին, Ազգային.....
 ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԷՅ ՏԸ ՄՕՆԹԵՖԷՆ) թարգմ. Մ. ՉՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ	— տարեկան.....	Կէս ոսկի Օսման .
» »	վեցամսեայ	Բառ » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք	»	15 դան. արծաթ
Մէկ թերթին Գիւնն է.....		60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո' եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ



Խմբագրութիւն Արեւիք և Մասիս Լրագրաց
 Դաշնութիւն, Նորատուրկեան խան

Կ. ՊՈԼԻՍ
 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԼՐԱԳՐՈՑ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 1 մարտ

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքային)	440
3 » » » (վճարներ)	409 3/8
3 » Բարիսի » (պանքային)	23
3 » » » (վճարներ)	23 7 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՎԹՈՅ

Օսմանեան Բոնսոլիոն

Երեկ Երեկոյ Գոյ. (Միաց. D. Սէրի) 19 23	Դաճեկան
Պորսային գոցուեկէն վերջը » 49 34	
Բերայի մէջ » — —	
Առաւօտուն բացուեցաւ » 49 32	
Բարձրագոյն գին » 49 32	
Նուազագոյն » 49 31	
Կէս օրին » 49 31	
Փոխառութիւն 1838) A. Սէրի 36 20	
» 1862) » » » 20 30	
» 1860) B. » » » 20 30	
» 1863) » » » 20 30	
» 1872) » » » 20 30	
» 1865) C. » Օսմ. » 49 27	
» 1869) » » » 49 27	
» 1873) » » » 49 27	

ԻՆՏԻՖԻԷ ԵԳԻՍՏԱԿԱՆ

Երեկ Երեկուն գոցուեցաւ	73 40
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	73 30
Կէս օրին	73 30

ԲԱՃՆԵՑՈՒՄՔ

Սօսիէթէ Ժէնէրալ..... Գ. Կ. Սնգլ. Լ. Բ. 3 15	
Քրէտի Ժէնէրալ..... » » Օսմ. » 7 2	
Պանք տը Գոնա..... » » » » 5 20	
Սօս. Նանթ Կ. վալէօր..... » » » » 3 25	
Բորտմուէյ..... » » » » 275	
Բուսէլիի Երկաթուղի..... Ֆր. 47	
Օպիկատիօն տը Բրիտիշ..... » 409	
Բաժնեթուղթ Լաւրիօմի..... » 70	

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի..... դրշ. ... 400	
20 Ֆրանքոնց..... » ... 87 20	
Անգլիական ոսկի..... » ... 110 42	
Բօլ Իմպերիալ..... » ... 90 6	
Քրիմից..... » ... 54 15	
Ռուսկի թղթագրամ..... » ... 8 61	
» տրժաթ..... » ... 89 40	
Ֆիօրին..... » ... 9 3	
Մէճ. արծ. (տարբ.)..... » ... 107 3	
Վ. Ենից..... » ... 102 32	
Հինգնոց..... » ... 103 40	
Մէթալիք..... » ... 99	

Պղինձ..... » ... 800	
Թղթագրամ..... » ... 3500	

ԵՐԵԿԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 12 Մարտ, Ժամ 5 վայր. 15 Երեկոյ	
Անգլ. քօնսոյի... գոցուեցաւ	97 3/16
Օսմ. բացուեցաւ	47 11/16
» » գոցուեցաւ	47 15/16
Միացեալ Կրուք 1.....	35 5/4
» » 2.....	20 1/4
» » 3.....	47 1/2
Փոխառութիւն 1877.....	82
Պանք Օթօման.....	14
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.).....	92 3/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ).....	66 1/8
» առանձն. (Բրիտիշֆիէ).....	85 5/4
Տայրա Սանիէ.....	63 1/2
Տօմանիալ (փոխառ. Բօչիլա).....	84 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877.....	—
Փոխառութիւն Բարիդի վրայ.....	—

Վ. Իէննա, 12 Մարտ, Ժամ 4 Երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ.....	124 55
Օսմանեան Երկաթուղի.....	23 20

Բարիզ, 12 Մարտ, Ժամ 4 3/4 վայր. Երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0..... բաց.....	109 87 1/2
» » 3 0/0..... բաց.....	81 92 1/2
Օսմանեան քօնսոյի գոցուեցաւ	48 10
» » գոցու. գ. Կ.	48 17 1/2
Միացեալ պարտք Սէրի Բ.	20 25
» » Գ.	48 40
» » Գ.	—
Օսմանեան Երկաթուղի.....	47 50
» Իէտիի բաժնեթուղթ.....	—
Պանք Օթօման.....	606 25
Գրէտի Լիօնէ.....	555
» Ֆոնսիէ գ. Կ. Բարձրացում 1365	
Բաժնետոմս Լիօնի (գուր. կտր.).....	1260
Սուէզի ջրանցք..... Բարձրացում 2105	
Ռուսական 5 0/0 1877ի (գ. Կ.).....	99
Իտալական Ռանթ (գ. Կ.).....	97 25
Եգիպտական միացեալ գոց.....	338 75
Սպանիական (արտաքին) (գ. Կ.).....	64 3/8
Բրիտիշ Թիւրք.....	414 25
5 0/0 Հելլենական (գ. Կ.).....	348 75
Զէք Լոնտրայի վրայ.....	25 38

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Մարտ 11, Ժ. 10, Վ. 30

Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0.....	109 85
Օսմանեան »	48 17 1/2
Եգիպտական միացեալ.....	337 50

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

347- ՏԱՐԻ

1885 ՄԱՐՏ 2

ԹԻԻ 3759

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՏԱՌԱԴԱՐՁ ԵՒ ՏԱՐԱԶԱՅՆ՝

Հայկական տառերուն խնդիրը անսպառազիւր մըն է տակաւին՝ լեզուաբանաց և լեզուագիտաց ճակատը մաշեցնելու բաւական։ Ես այս դասուն մէջ տեղ չունիմ, և թող կուտամ որ Հ. Պարոնեան անոնց գիտը, և Հ. Տէվրիշեան անոնց գիտութիւնը, և այլք ուրիշ ծանր խնդիրները ուսումնասիրեն։

Տառերուն ձայնն ալ անհամաձայնութեանց հիման վրայ հաստատուած է. տարբեր կը հնչեն ի Պոլիս և տարբեր ի Տիպիս, և բնագաւառաց բնակիչք ալ բաւական տարբերութիւններ ունին իրերաց հետ, ո՛չ միայն բաղաձայններու, այլ և ձայնաւորներու հնչման մէջ։ Մանաւանդ մեր բաղնաթիւ և նմանահնչիւն բաղաձայնները իրարմէ գատելու արհեստը ամենուն համար նոյնպէս դիւրին չէ, և պէտք է ընդունիլ որ դժուարութիւնն դժարատեղութեանց պատճառ եղած է և է։

Այսօր կը տեսնեմք թէ Գառաշայնի Հայոց մէջ Գառաշայն է, և համաձայն ընելու համար չքաւեր կամք և օրէնք, վասն զի ձայնը մանկական ունակութեամբ կ'ուսանիմք, և այդ ունակութիւնը ուղղել կամ փոփոխել չատ դժուար է։

Սակայն դիւրին է տառերը գրելը. զայն վարժարանաց մէջ կ'ուսանիմք, և տառերը գրելը կամաւոր գործողութեամբ կը կատարեմք, և բնաւ դժուարութիւն չեմք զգար մի տառի տեղ միւսը գրել։

Հայերէն լեզուն նմանաձայն տառերուն

պատճառաւ անխրոններու քար դայթակղութեան կը լինի, և հայերէնի համբալինները չատ կը նեղուին թէ բաւ մը ո՛ր տառով պիտի գրեն։ Բայց որչափ և դժուարին, սակայն վերջապէս ունիմք կանոն մը հասարակ բառերու համար և ամեն տեղերու բառարանները և գիրքերը համաձայն են մեր լեզուի հասարակ բառերու գրութեան վրայ։

Սակայն նոր ժամանակաց մէջ անհնարին չիթթութիւն սկսած է պատճառել օտարալեզու յատուկ անուանց տառադարձութեան ոճը, և մանաւանդ լրագիրք և վրայասանութեանց թարգմանիչք և այլ աւօրեայ երկասիրութեանց հեղինակք այն տեսակ տարբեր տառերով կը գրեն մի և նոյն անունը, որ խեղճ հայ ընթերցողը, որ օտար լեզուաց ներհուն և կամ շատ վարժ գրագէտ չլինի, կը կարծէ թէ տարբեր անձանց կամ տարբեր տեղեաց յիշատակութիւններ են։

Երկու գլխաւոր և մեծամեծ տարբերութիւնները Պոլսոյ և Տիպիսու մասնաւորներուն մէջ կը տիրեն։ Տիպիսեցիք իրենցը հնաւանդ կանոնաց հետեւողութեան համաձայն կը գտնեն. Պոլսեցիք իրենցը աւելի տարածեալ սոսոցանութեան յարմար կը պնդեն, և մանաւանդ քանի մը միջնադարեան տառադարձութիւններ կը յիշատակեն, զորօրինակ պարս, Բաբար և ըն. բառերուն մէջ, որք իրենց ոճոյն կը համեմատին։

Պոլսական մամլոյն հովանաւորն է և Վեներտոյ մամուլն, իսկ Վիէնայի հայ մամուլն մասամբ Տիպիսեցոց կը մերձենայ։ Պոլսոյ մամլոյն ամեն հեղինակներն ալ համաձայնութեամբ չեն փայլիր, և մանաւանդ իրենց համար նոյնահնչիւն սեպուած տառերն անխափր կը գործածեն ո՛չ թէ միայն

տարբեր զիրքերու մէջ տարբեր կերպով գրեւով, այլ և նոյն գիրքին, նոյն լրագրին, և երբեմն ալ նոյն յօդուածին մէջ մի և նոյն անունը տարբեր ուղղագրութեամբ գործածուած կը գտնուի:

Դրադէտ անձինք լաւ գիտեն որ թէ՛ հատարակ և թէ՛ յատուկ անուն մը աւելի իւր ուղղագրութեամբ կ'որոշուի, քան իւր հնչմամբ, վասն զի ուղղագրութիւնն բառին ծագումը, արմատը, ածանցը և բուն նշանակութիւնը կը յայտնէ. ուղղագրութիւնն է դարձեալ որ աչքէն կը խօսի և բառերուն և անուններուն յատուկ գաղափարը կը տալարեւ մեր մտաց մէջ:

Այդ մեծամեծ օգուտներն են բուն պատճառը, որով եւրոպական ծանօթ լեզուք, գաղղիերէնն, անգլիերէնն, իտալերէնն և թէպէտ երբեմն նոյն տառը տարբեր կերպով կը հնչեն և երբեմն ալ տարբեր տառերը նոյն կերպով կը հնչեն, սակայն երբէք մտածած չեն տառերը իրարու փոխանակել, այլ խղճահար ճշգրութեամբ ուղղագրութիւնը կը պահեն:

Աւելի երկար չեմք ուզեր պատճառաբանել ցուցնելու և հաստատելու թէ համաձայն ուղղագրութիւն մը կարելոր և ամենակարեւոր է հայ մամլոյն զանազան ճիւղերուն, որպէսզի հայ լեզուին միութիւնը հաստատուի և աշխարհի գնազան կողմերը տպագրուած զիրքերը, լրագրերը և թերթերը կարգադրող Հայերը չչլիթին, և իրաց և անձանց և տեղեաց անունները աչքով աւտփրին, մանաւանդ որ ականջով սովորելու կանոնն անհաստատ է, և ինչպէս կ'ըսէինք տառաձայնն տարաձայն է, գոնէ տառադարձը համաձայն լինի, զի այդ իսկ է լեզուադիտական հիմը:

Մեր առաջարկածը հաստատուն է ի նախնեաց ուղղագրեալ անուանց մէջ, և այսօր ամեն տեղ կը գրեն Պետրոս թէպէտ ոմանք կը հնչեն Bedros և այլք Petros. ամեն տեղ կը գրեն Տիգրան թէպէտ ոմանք կը հնչեն Dicran և այլք Tigran. ամեն տեղ կը գրեն Ագապի թէպէտ ոմանք կը հնչեն Acabi և այլք Agapi և ըն. և ըն.: Առ այժմ ներքեմք ամեն դաւառաց և քաղաքաց իրենց հնչումը շարունակել մինչեւ որ վարժութիւնը և սովորութիւնը համաձայնեցնէ զիրենք. այլ չներեմք գրողաց և տպողաց

տարբեր ուղղագրութեամբ արտայայտել նոյն անունը, որպէս զի բաժանման և տառաձայնութեան ահագին պարիսպներ կանդնած չլինինք: Զոր օրինակ «Կարօ» բառը տարբեր կերպերով հնչուելուն համար ո՛չ «Կարօ» կը գրենք, և ո՛չ «Կարօ» . այդպէս ալ նոր յատուկ անուններուն մէջ ունենամք մեզի հաստատուն մի կանոն ուղղագրութեան և տառադարձութեան, որպէս զի բոլոր Հայեր նոյն անունը նոյն կերպով գործած տեսնեն և նոյնութեան ապացուցութիւնը ստանան:

Յիշատակեալ անկարգութիւնը այն ատիճան հասած է որ ծանօթ անուններն ալ աղաւաղութեան ենթարկուիլ սկսան, և չգիտեմ թէ լրագրաց մէջ «Բիբլիա», Անթիօն, Փէթաք և և անունները տեսնողներ կըրցա՞ն յիշել թէ Կիբլա, Անթոնիոս, Բեթաք և և ծանօթ անուններն են անոնք:

Կոտանդնուալոյց լրագիրք և հեղինակը աւելի կը գիտեն, վասն զի տառադարձութեան հաստատուն կանոն չունենալով կրնան իրենց ախորժակին հետեւիլ, և գըրել ինչպէս որ հանդիպի: Տառադարձի օրինաց մտադրութիւն դարձնել պարտաւորեցաւ Հ. Տէվրիշեան, զի գիտական գրութեանց կ'ըբաղէր, և վերջին ատեններս գիտեցինք որ նաեւ Համբէ-Հարօլին Գեր. Հեղինակը նոր անուններու տառադարձութեանց մէջ ուղղագրական կանոններ ընդունած է: Վերջապէս կամայ թէ ակամայ խնդիրը իւր ծանրակշռութիւնը կ'ստանայ, և գրադէտը ու հեղինակը, գրողը ու հրատարակողը պէտք է այդ խնդրոյն մը տաղբութիւն դարձնեն, որպէս զի ընթերցողը ալ մանաւանդ ժողովրդական դասը, չը յորդորուին կարծել թէ Փարէզ, Բարէ և Պարէ երեք տարբեր քաղաքներ են, և Տանի, Տանի և Դանի երեք տարբեր անձեր:

Այդ տեսակ խնդիրները որոշելու և վճռելու համար հարկ է լեզուադիտաց կաճառ մը ունենալ, իրր գրադիտական դերագոյն ատեան, զոր չունինք: Սակայն ինչպէս ուրիշ խնդիրներու մէջ առանց իշխանական որոշմանց և լոկ կամաւոր ու բանական մերձեցմամբ շատ խնդիրներ լուծուեցան, նոյնպէս ալ այս առթիւն մէջ կը յուսամք թէ կրնամք յաջողիլ: Ուստի հրաւեր կը կարգամք ամեն գրողաց և հրատա-

բակողաց որ տառադարձ ըսուած բանը մը-
տադրութեան արժանի համարին, հնա-
ւանդները խնամով պահպանեն, նոր ա-
նուններու մէջ ալ նախնեաց օրէնքը յար-
գեն, հետզհետէ իրարու համաձայնելու
ջանք ընեն, և իրարու մէջ եղած տարբե-
րութիւններն ալ հետզհետէ ջնջելու աշխա-
տին, որպէս զի ինչպէս հասարակ բառից
բառարաններ ունիմք, տառական կամ ուղ-
ղագրական հաստատուն կանոնի վրայ հիմ-
նուած, նոյնպէս ալ կարող լինիմք հին եւ
նոր յատուկ անուանց բառարան մը կամ
բառարաններ ունենալ, նոյն տառական
կամ ուղղագրական հաստատուն կանոննե-
րով յօրինուած :

Երբ մի կողմանէ կը տեսնեմք որ արդի
հայերէնին օր ըստ օրէ կը կանոնաւորուի և
կը կարգադրուի, և մինչեւ իսկ ոճերու հա-
մաձայնութեան և քերականական ուղղու-
թեան մերձեցումներ կ'ընդունի, անհնար է
տառադարձի խնդիրը անարգել :

Սոյն առաջարկութեամբ և ներկայ յօդ-
ուածով կը բաղձամք առիթ ընծայել դրա-
դիտաց և լեզուաբանից՝ տառադարձի խն-
դիրը ինկատի առնուլ, և ի հարկին մեք ալ
դարձեալ կը դրեմք, և մանրամասնութեանց
և մասնաւոր խնդրոց ալ կը միջամտեմք, և
թէպէտ մասնադէտ չեմք, այլ կը սիրեմք
մասնադիտաց լուսաբանութիւնները լսել և
կարծիքները յարգել, և մասնաւոր մասնա-
դիտաց տարբեր կարծիքներուն բաղխելն
բղխեալ եղբայրացութեանց հասնիլ :

ՏԻՐԱՅՐ

ՆՈՐԱՎԷՊ

Մ Ե Ծ Հ Ա Ր Ս Ա Ն Ի Ք Մ Ը

ՕՐԻՈՐԴԻ ՄՕՐԱԹԵՐԹԷՆ ՔԱՂԵԱԼ ՅԵՇԱՏԱԳԻՐՔ

27 Նոյեմբեր

Աստի մայրիկս Տիկին տը Մէրսըրէյին
կը վաղէ, եւ ահա իմացածը :

Երկու Մարթէլ-Սիմիէօզներն՝ անդրա-
նիկն՝ Ադրիէն — իմն՝ եւ միւսը Բօլ՝ միաժ-
եայ կամաւորը՝ տասը տարի մը կայ իրենց
հայրենական մեծ մայրը կորուսին՝ պատ-

ուական՝ կին մը՝ շատ հարուստ՝ շատ նորա-
նշան եւ որ միակ մտածութիւն մ'ունէր աշ-
խարհիս վրայ՝ իւր ցեղին շարունակութիւնն
ապահովել : Իրեն այնպէս կը թուէր թէ
աշխարհիս վախճանն հասած կ'ըլլար եթէ
օր մը Մարթէլ-Սիմիէօզներն անձեռնադիմ
: Խելքը գլուխը կին մ'ալ էր, եւ կտակին
մէջ շատ հնարալէտ սլայման մը սպրդեց...
Իւր բաժանելի ստացուածներէն դուրս կը
դնէր միլիոն մը Փրանք... : Այս միլիոնն՝ իւր
բաղադրեալ շահերով՝ իւր Ադրիէն թողան
պիտի դարձէր եթէ քսանըհինգին կարգուէր
...եթէ ոչ միլիոնը Բօլ կրտսերին պիտի ըլ-
լար՝ միշտ նոյն տուգանաց սպառնալեօք... :
Եւ եթէ երկուքն ալ՝ Ադրիէն եւ Բօլ՝ ա-
մուրի կենաց մէջ մնալ յամառէին՝ միլիոնն
ու անոր շահերը՝ ամէնն ալ աղքատաց սի-
տի ըլլար :

Այդ հանդիս պահեստի միլիոնն այսօր
շահերով 1,500,000 Փրանք եղած է : Վե-
րոյիշեալն Ադրիէն բնաւ լծակցելու հակա-
մէտ չէր...որսի՝ ձիերու՝ արշաւանաց խենթ՝
«ֆօրթի» մարդ ըստ կատարեալ առման բա-
ռին, խելքը միտքն իւր անկախութիւնը
պահպանելն էր : «Պիտի չկարգուիմ՝ կ'ըսէր,
180,000 Փրանք եկամուտ ունիմ, կը բաւէ
ինձ : Մարդ գործն եթէ գիտնայ եւ կարգ-
կանոն դնէ, շատ աղէկ կրնայ ապրիլ» : Հա-
մառօրե 30 շուկարի 10ին հասնիլը կը տես-
նէր կատարեալ անտարբերութեամբ . այն
օրը քսանըհինգին պիտի կոխէ . բայց դէպք
ուրիշ կերպով կը տնօրինէին :

Անցեալ տարուան վերջերը մեր աշխար-
հին մէջ տեղի ունեցաւ մեծ շահադիտական
շարժում մը, տեսակ մը դրամադիտական
խաչակրութիւն հեթանոսաց դէմ...Ադրիէն
ալ շարժման մէջ նետուեցաւ՝ ոչ. այնչափ
առհալոյ եւ աղահուլթեան՝ որչափ աս-
պետական ինքնաբերութեամբ մը : Խնդիրն
ուղղախօս պանքաներու օժանդակել էր :

Խեղճ տղայ...բաշին մէջ բռնուեցաւ՝
եւ բաւական՝ մեծ գումարաւ, 1,400,000
Փրանք : Այլ եւս իրեն 120,000 Փրանք ե-
կամուտ միայն կը մնար...եւ չսպասած ա-
տեն նեղը մնաց : Սակայն չար բաղդին՝
զուարթ երես ցցուց :

Քիչ մը դուռը պղտիկցուց, ձիեր ծա-
խեց, ծառայներ արձկեց... :

Միշտ նոյն տրամադրութեան մէջ էր .

ամուսնութիւն՝ երբէք : Բայց ամիս մը կայ բարեկամները զինքը լաւ մը լուացին՝ բարոյախօսեցին՝ հասկցուցին թէ 1,500,000 ֆրանք ձեռքէ հանելը խելքի դէմ բան էր : Ասոր համար կը բաւէր որ կարգուի՝ սիրուն աղջիկ մը եւ յոյր օժիտ մ'առնու, այնպէս որ կրնար նեղութիւն կարծածը հաճոյից փոխուիլ :

Կամայ կամայ համոզուելու պէս եղաւ, եւ թոյլ տուաւ իւր հօրեղբոր աղջկան՝ Տիկին տը Բէմէնսին իրեն համար բան մը բռնաւորուելու : Ան ալ բնութեց եւ գտաւ...այդ Գաթրին տը Բիւլմարէն երկայն ձողը որ շարաշար հարուստ եւ սոսկալի նիհար է... : Առջի դիտողութիւնն ալ այս եղաւ. «Շատ նիհար ու ձիւ վրայ բնաւ չվայելէր...» Կարգուելէ վերջ՝ կ'ըսէր՝ դոնէ այնպիսի կէնք մ'առնեմ որ ձի հեծնալ գիտնայ եւ վայելցնէ :

Բայց ժամանակը կ'անցնէր...նեղուած՝ սեղմուած՝ չտապուած էր. առջի բերան չէ ըսած էր...հիմա ո՛չ այդ կ'ըսէր ո՛չ չէ... հաւանօրէն այդ ի կը մօտենար երբ հասաւ Նոյեմբեր 24ի մեծ թատերական որոշիչ օրն :

Այն օր փոխանակ ըստ իմ սովորութեան յետ կիսաւուր ձիավարելու՝ առաւօտուն պիտի հեծնայի այդ պատուական Պ. Քօդին հետ որ զիս իւր աչկերտաց իբր ամենէն փայլուններէն մին կը նկատէ ու ատեն աւտեն հետս պառոյտ մը կ'ընէ անտառին մէջ... : Ժամը տասնին կը մեկնիմ քուբէով մը Միս Մօրթընի հետ...անտառին մտից ձախտաւորը կանդ կ'առնուէր. հոն կ'սպասէր ինձ Պ. Քօդ : Կրումը Թրիպուլէն բերած էր՝ որ շատ հլու չէ միշտ, եւ այն օրն ալ շատ խենթեցեր էր քառսուն եւ ութ ժամէ ի վեր քիթը դուրս հանած չըլլալուն : Արտօրնօք հագուած էի, եւ վիրգինէ գէս ամպափոյ սանտրած էր՝ տասը տասներկու գնդասեղ մխելով երկու ստուար հիւսկէններու խառնիխուռն արոհեալ մազերուս մէջ :

Մ. Քօդ զիս ձի կը հեծցնէ՝ ոչ առանց դժուարութեան՝ վասն զի Թրիպուլէն օղերը կ'ըլլէր... : Բայց երբ զիս ուսոց վրայ զգաց՝ բոլորովին յիմարեցաւ : Սխաւ դալկը հատանել եւ երկու ետեւի թաթից վրայ յենլով ծառանալ. բայց ես ձիու վրայ հաստատուն եմ եւ գիտեմ Թրիպուլէն յանձան-

ձել : Լաւ մը կը հարուածեմ զինք : Բայց մինչդեռ մեր երկուց մէջ այս բացատրութիւնք տեղի կ'առնենային՝ բան մը գլխէս կը թաւայի՝ կը գլորի ուսերս ի վար : Իմ երկու հիւսկէններս էին որ հեղեղացայտ կը սխալէին՝ մարտամբոխին մէջ գլխարկս ալ տանելով : Կը մնամ հերարձակ՝ զահանդեալ Թրիպուլէն վրայ՝ վարօքս մերկակոծ ծրփածրիւրով :

Ճիշդ այս վայրկեանին ձիաւորեալ դուրս կ'ըլլէր ծառուղիէն Ագրիէն՝ Կոմս տը Մարթէլ-Սիմիէօզ : Կանդ կ'առնու՝ զրոտեալ պատկանելի հեռաւորութեամբ, եւ ակնթարթի մը մէջ երեք զարմացական աստիճանաւորութիւններէ կ'անցնի :

Առաջինը հեծելուհւոյն համար. « Ի՛նչ վայելէ է ձիու վրայ » :

Երկրորդը ձիերուս համար. « Եւ ի՛նչ ձիեր... » :

Երրորդը զիմացս համար. « Ո՛րչափ ալ տեսքոտ է... » :

Սակայն Թրիպուլէ քիչ մը մեղմացեր էր, կը խաղաղէր, կ'ամբէր : Մեծ աշխատութեամբ կրումը կը դանէր աւազին վրայ հինգ վեց ցիրեցան գնդասեղներ, և ես ըստ կարի մազերս կարգի կը դնէի՝ թոյլ թոյլ դէլ խուս վրայ թողլով քօլս որ ժապաւնիկ պէս վաթթած էր աստատմեալ մազերուս շուրջը :

Վերջապէս կը մեկնինք Պ. Քօդ եւ ես, կրումը մեզմէ հետի, և կրումին ետին նոյն հեռաւորութեամբ՝ Մարթէլ-Սիմիէօզներուն անդրանիկն՝ ի պատիւ իմ վերսկսելով անտառին չըջանն : Իսկ ես՝ անմեղձ այդչափ չքեղ յաղթանակ մը մոքէս անգամ չէի անցնէր : Օդը կծու եւ գառնաշունչ էր... : Արշաւատոյր կ'երթայինք...Թրիպուլէ՛ ցրտէն խայթեալ երկու երեք անգամ փորձ փորձեց ընդվզելու... : Բայց տեսաւ որ հետս գլուխ չէլներ. Պ. Քօդ շատ գոհ էր ինչ... « Այս առաւօտ, կ'ըսէր, հրեշտակի պէս կը հեծնես... » :

Այս էր նաեւ իմ երկրորդ կրումիս ալ յանպատրաստից կրումիս՝ կարծիքն. « Ո՛հ, ի՛նչ վայելէ է ձիու վրայ...որչափ վայելէ է... » : Ուրիշ բան չէր յեղեղեր մոտացը մէջ այս բոլոր երազնիթաց չըջագայութեան մէջ... : Եւ զիս Գաթրին տը Բիւլմարէնի հետ կը համեմատէր... :

Անտառին շրջանն աւարտելէն յետոյ՝ ձիէ կ'իջնեմ՝ կը գտնեմ Միս Մօրթընը քուբէին մէջ՝ եւ ճամբայ կ'ելլենք տը Վարէն փողոցը։ Պատանին Մարթէլ-Սիմիէօզ կը տոհորակէ կառքին ետեւէն՝ եւ մինչեւ տունս կ'ուղեկցի ինձ...կը տեսնէ ապարանից դրան բացուիլն՝ եւ կառքը կամարին տակ անդնդաօդը կը համոզուի թէ բաւական պատշաճաւոր բնակարան մ'ունիմ՝ ազնուաբնակ փողոցի մէջ, եւ թէ՛ ըստ ամենայն հաւանականութեան՝ բաղդախնդիր օրիորդ մը չեմ։

Այո՛, լաւ . բայց այդ անվեհեր ամաղորնին անո՞ւնն։ Այն ատեն ամենապարզ գաղափար մը կը յղանայ...բայց խնդիրն այն գաղափարն ունենալն էր։ Տուն կը դառնայ, 1,500,000 հասցէից բառարանը բերել կուտայ։ Տը Վարէն փողոց, թիւ 49 կրկ . Պարոն եւ Պարոնուհի տը Լէօդի...Այսպէս ահա սովորեցաւ այն անձին անունն որ թեւեւ օր մը իւր կենաց հաւատարիմ ընկերն ըլլայ պիտի։ Պարոն տը Լէօդի...բայց հայրս աղջիկ մ'ունէ՞ր...։ Բայց ես էի հօրս աղջիկը։ Այս խորհուրդը պարզելու էր։

Նոյն օրն այս գործս ալ եղաւ լմնցաւ, վասն զի երեկոյին՝ — ո՞վ դէպք՝ այս ալ քու ըրածդ է՝ — երեկոյին՝ Մէրսըրէնքուն ճաշի կ'երթար փողք խմբակով...եւ առանց փոյթ ցուցնելու, ասդիս անդին խօսքեր ընելով, կ'ըսէր Տիկին տը Մէրսըրէին։

— Կը ճանչէ՞ք արդեօք Պ. տը Լէօդին։

— Մտերիմ ենք։

— Աղջիկ մ'ունի՞ր։

— Այո՛։

— Տարի՞քը։

— Գասնը կոխեց։

— Շատ ալ գեղեցիկ, չէ՞ մի։

Կ'երեւի թէ այս խօսքիս վրայ ընդհանուր աղաղակ մը փրթաւ, զարմացական աղաղակ մը ի պատիւ ինձ։ Միայն ինք մնացեր էր զիս չճանչցող խեղճը...։ Տիկին տը Մէրսըրէ այս ամէն հարցուածոց պատճառն խնդրեց։ Եւ ինք ալ սկսաւ պատմել խանդով՝ առաւօտեան պատահումն, ձիւս վերայ համարձակութիւնս, հողմակոծ մազերս, վրանիս ցոլացող արեւու շող մը որ զանոնք կը փափկեցնէր...։ Վերջապէս քնարերգակ աւիւն մը կար իւր ստորագրութեան մէջ...։ Ամէնը բերանաբաց կը մնան...այսչափ

խանդ ունենալը մէկը չէր գիտեր։

Այն ատեն Տիկին տը Մէրսըրէ ամենէն չնաշխարհիկ՝ ամենէն հիանալի մտաց պատրաստակաճութիւն մը ցցուց...։ Այս ալ ըսեմ որ մայրս շատ կը սիրէ, մինչդեռ Բիւլիմարէնները սրտանց կ'ատէ՝ վեց չաբաթ է ի վեր՝ վասն զի մինչեւ այն ատեն անմեկնելի բարեկամներ էին։ Բայց իրեն այս խտուրթեան օրինաւոր պատճառ մ'ունի։

Այս տարի Բիւլիմարէններն երեք երեկոյթ տուին . առաջինն Օռլէանի իշխանազանց, երկրորդը Վլադիմիր մեծ դքսին, եւ երրորդը կարեւորութիւն չունեցող խումբ մը մարդկանց...։ Ճիշդ այս վերջնոց հետ դքսուհին Մէրսըրէները հրաւիրեց...։ Արդ՝ իրենց պէս ազնուազարմ, իշենց պէս հարուստ ընտանիք մը՝ ամենեւին մանրերու հետ դասուելու ընտանիք մը չեն։ Փէնն անկէ կը ծագի։

Եւ հիմա՝ ահա՝ ահա Տիկին տը Մէրսըրէի հանճարոյն ծնունդը։ Դեռ հոն նստած միջոցին՝ խօսքը բերնէն յափշտակելով՝ առանց վայրկեան մը վարանելու, իւր յապուշ կրթեալ ամուսնոյն առջեւ՝ զրուցեց նա թէ յաջորդ երեկոյին պիտի ունենար իւր տան մէջ մէկ քանի բարեկամներ՝ ընդ որս Տիկին եւ Օրիորդ տը Լէօդի, եւ թէ Պ. տը Սիմիէօզ բարով եկած պիտի ըլլար՝ եթէ քիչ մը նուազածութիւն իրեն սարսափ չէր պատճառեր, եւ ցանկացող էր տեսնելու վերստին իւր Պուլոնի անտառին Դիցանոյը։ Պ. տը Մէրսըրէ չուարած մնացեր էր։

— Սխալմունք մը չունենա՞ս՝ ազնիւ բարեկամուհիս, ըսաւ նա . վաղն երեկոյ է որ Ժիմնազ պիտի երթանք Օթթավ Ֆէյցէի նոր խաղը տեսնելու...։

— Ոչ, բարեկամս, միւս օր է։

— Ինձ կը թուէր թէ... օթթավին ես անձամբ առի...։

— Կ'ըսեմ ձեզ թէ միւս օր է։

Բերանը խփեց, եւ յետ ընթերցաց միայն առեղծոածի լուծումն խնայաւ։ Տիկին տը Մէրսըրէ ասով ալ չբաւականացաւ։ Պ. տը Սիմիէօզն ողողելով յարգահոռան պերճախօսութեամբ ներբողեանս խօսեցաւ։

— Երանեակ տը Լէօդի... քեզի վայելիք էինն այն է . այս առաւօտուն պատահումը՝ Նախախնամութեան մէկ դործն է։

Իսկ ինք իւր պարոյրը կը յեղյեղէր...

« Ահ ի՛նչ վայելուչ էր ձիու վրայ.... »

Նրէկ մօրս հետ տեսակցելէ յետոյ՝ Տիկին տը Մէրսըրէ՝ արիարար՝ գլխու ցաւ մօտիկ չընելով՝ ասպարէզ կը նետուէր, հըրաւիրեալներ կը հայթայթէր, երաժիշտներ կը հնարէր, բրօկրամներ տպել կուտար, քանդի բրօկրամը տպեալ էին.... ի՛նչ եռանդ:

Նժ սակայն բաղդ ըսածդ ինչէ՞ կախում ունի: Նթէ Վիրդինէ աւելի ամուր կերպով պնդած ըլլար երկու ստուար հիւսկէններն, եթէ Թրիպուլէ վրան հեծնելու չըստահակէր, եթէ Բիւխարէնք Մէրսըրէները մանրերու հետ դասած չըլլային, ինք վաղը մեր տունը պիտի չճաչէր, եւ ես իմ անձիս այս հարցուածը պիտի չուզէի. « Ամսուհի տը Մարթէլ Սիմիէօզ պիտի ըլլամ թէ ոչ »:

Տարաբաղդ Բիւխարէններ որ Բարիզ եկած էին ի մասնաւոր իրենց հրաշակերտն ի ցոյց դնելու համար: Նեղճ Քաթրին տը Բիւխարէն.... Արդեօք ե՞տ տամ իրեն իւր փոքրիկ կոմսը.... Թէ ինձ վար դնեմ: Չգիտեմ: Բայց այս վեցերորդը շատ դէշ չսկըսաւ, եւ եթէ գրաւ բռնել հարկ ըլլայ՝ կողմնակի հաւասար կը կարծեմ....:

29 Նոյ. Առաւօտեան ժամ 10.

Իսկ այսօր՝ քիչ մ'աւելի հաւանականութիւն իրեն կողմ կ'անցնի. չուանը ձեռքն է:

Երեք օրէ ի վեր բանի՛քանի՛ խորհուրդներ այս իրիկուան ճաշուն համար: Հաց-կերոյթ մը պիտի ըլլայ թէ սովորական ընթրիք մը: Զինքն ո՛ւր պիտի զետեղենք.... Գիմացս թէ քովս: Մայրիկս դէպք կ'ըսէ. կը պնդէ թէ շատ աւելի յանկուցիչ եմ դէմ առ դէմ քան առ ի շնդ. մանաւանդ երբ հագուստս բաց ըլլայ, եւ հագուստս ալ բաց էր, Մէրսըրէներուն տան մէջ եղածէն ալ աւելի....: Արուե՛ստ աստիճանաւորութեան:

Բայց ես քիչ քիչ նախամեծար կը համարէի: Բնաւ տաքնապ, բնաւ երկչոտութիւն չէի զգար: Հարկ էր որ զինքը խօսեցնէի, խոստովանեցնէի: Միշտ իմ հաստատուն դադարաւոր. վարկաբարակի չամուսնանալ: Աստի ո՞վ կողմն դրուեցաւ: Շատ անօթի չըլլալու համար, ուշի ուշով հետազօտութիւն կատարել կարենալու համար՝ ժամը հնդին առատ ախրատ մ'ըրած էի, եւ

խօսակցութիւնն անցընել տուի բոլոր այն փոքր ճամբաներէն ուսկից հարկ էր վայն առաջնորդել:

Ժամ ու կէս սեղանի վրայ էինք եւ այս ժամանակէս վերջը լիուլի համոզեալ էի թէ երկուքս իրարու համար ստեղծուած էինք: Նօսքերնիս բացինք հաւտ եւ դատ: Նօսքի աղէկ սկզբնաւորութիւն մ'էր: Իսկոյն նըշմարեցի որ իրեն ալ աչաց ձիու նոյն տիպարն հաճելի էր ինչպէս ինձ....: Ոչ շատ անօսը՝ ոչ շատ թուուցիկ.... Թեթեւ՝ անտարակոյս՝ բայց ոչ թէ վտիւ. թեթեւ այլ առոյգ....: Նոյն նմանութիւն դադարաւոր լծոյ խնդրոց վրայ.... կը սոսկայ այդ անդլիածեւ երկար փոկերէն որ ձիւրը յանհունս կը հեռացնեն. իւր սիրածներն են կարճ՝ քիչ մը շղթայով ամրապնդեալ կազմածներ, իրենց դանդաճանալով դացող ձիւրը: Քիչ մը զարմացաւ ալ կարծեմ այսպիսի նիւթոց վրայ այնչափ հմուտ լիւնս տեսնելով: Զարմացաւ՝ եւ սքանչացաւ միանգամայն: Ճաշուն սկիզբը յայտնապէս յուզեալ այլայլեալ էր....: Բայց քիչ ատենէն խօսակցութիւնն իւր բնական հոտանքն առաւ: Շուտով հանգըստացուցի զինք: Երկուքս ալ նոյն լեզուէ կը հասկընայինք: Իրար հասկընալու համար ստեղծուած էինք:

Ութսուն Ծր. Հասանալէ ամենագեղեցիկ եւ անարատ ասպականեալ մը վայրի վառաղը կ'որոսայ: Տեղն ի տեղ նկարագրեց իւր որսի համազգեստը. փրանամէս լողիլ՝ դօս թերթի գոյն, կապոյտ թաւիլ դրապանք եւ ծոպը, մանիշակադոյն թեղանք: Մեզ կանանցս համար հիանալի յարմարեցնելք բան մը կայ կառաց գոյնին մէջ՝ այս դօս թերթի երանգաւ....: Այժմէն փոքր եռասայր գլխարկ մը կ'երազեմ....: Ահ եթէ իմ սիրուն Սէսիլս՝ իմ մտերմուհիս՝ կարենար ամուսին մը գտնել որ՝ Բարիզէն ոչ շատ հեռի՝ եղջերուի որսախուժը մ'ունենար, նա ինձ կ'ուղար կնճի որսի՝ եւ ես անոր եղջերուի որսի կ'երթայի: Նրկնից դմբէթին տակ մեր երկուքէն երջանիկ կ'լին պիտի չը գտնուէր....: Բայց տես ահա արդէն այդ պարունին վրայ կը խօսիմ իբր թէ ամուսինս եղած ըլլար՝ եւ իմն ըլլային իւր ութսուն բարակները:

Փորձութիւն մ'ալ միտքս կուղայ: Մեք ընդհանրապէս դատապարտեալ ենք այն-

պիսի ամուսիններ անկողնու որ կատարեալ անգործութեան մէջ կ'ապրին . ասոր համար է որ շատ անգամ յողջութիւնն ու ճանճրոյթը շուտ կը սողոսկին մեր աստիճանի գերդաստանաց մէջ : Այս մասին ալ փառք Աստուծոյ՝ զբաղած է նա , բազմազբաղ : Վայրկեան մ'ազատ չունի . իւր գործունէութիւնն ու միտքը վերապահեալ են օգտակար եւ միանգամայն վայելուչ գործոց... : Նորակալմ շատ շէտ շրջանակի մը վարչական խորհրդոյ անդամ է . անդամ է Ազանեաց նշանաճգական մասնաժողովոյն , եւ Սառնասահիկ ընկերութեան , Աթիբէ-Չէյլի ընկերութեան մը չափակից է . վերջապէս քառորդ բաժին մ'ունի ընդ դիւր ճիւղաւի ակոսի մը մէջ . այս պարագամունք իւր կեանքն անգործ անտարբեր չեն ձգեր :

Կէս ժամ չանցած այս ամէնը գիտէի : Յետ որոյ դոյզն ինչ քաղաքական բնուածիւն մ'անցնել տուի իրեն : Մեծ , ամենամեծ խնդիր : Որոշ միտքս դրած էի այս կէտին լաւ գգուշանալ որ յետոյ սիրտս չայրի : Այս մասին մայրս դժնդակ փորձանաց պատահած է , եւ նոյն տառապանաց ենթարկուիլ չէի ուզեր :

Մայրիկս շատ երջանիկ եղած է հօրս հետ , այո՛ , շատ երջանիկ , բայց ի սակայն քաղաքական դիտակէտէն : Դեռահասակ ամուսնացած է հօրս հետ որ միապետական հին անխառն սերունդ մ'էր : Մայրս ալ նոյնպէս : Ամէն բան ի կարգի էր : Մէկ մ'ալ 1863ի մօտերը հայրիկս կայսրութեան յարեցաւ : Յօժարութեամբ ոչ այլ բարեօրրութեանէն : Խեղճ սիրելի հայր . ա՛յնչափ բարի է , ծայրայեղ բարի : Իւր եղբօր Արմանի սիրոյն ըրաւ զայն՝ որ այսօր զօրապետ է . այն ատեն հարիւրապետ մ'էր՝ դարերէ ի վեր . չէր յառաջեր , անոր դէմ կը խոտանային՝ որովհետեւ հայրս՝ մերժելով իրեն եղած առաջարկութիւններն՝ երբէք Թիւրքիոյ տը կոխել չէր ուզած :

Այն ատեն հայրս՝ որ զԱրման կը պաշտէր՝ ընդունեցաւ հրաւեր մը եւ խոտանցաւ մայրս ներկայացնելու : Այս դէպք կայսրութեան համար ճշմարիտ յաղթանակ մ'էր , վասն զի մօրս արիւնքն աւելի զուտ արիւն չկայ աշխարհիս վրայ : Հայրիկս ալ մեծ գարնէ է՝ բայց իւր ցեղը մօրս տոհմին չափ անընդհատ չէ :

Թիւրքիոյ ներկայացուելու այն սոսկալի օրը՝ մայրս արտասուօք անցուց : Սակայն հարկադրեցաւ հնազանդելու . բայց երկույին՝ փողոցին վրայ՝ լանտօյին մէջ՝ զարհուրելի տեսարան մ'եղաւ : Մայրիկս՝ վերջին վայրկեանին կը դժկամակէր : Վար իջնել ուզեց , գլուխը վարդապետակ՝ եւ ոտքն սալտակ սնդուսէ մոյկերով , Բօն-Բօյալի ճիւղ մէջտեղ : Եւ ծիւնը մեծատարափ կը տեղար : Վերջապէս համակամեցաւ : Արման հօրեղբայրս նշան մ'առաւ տասնեւհինգ օր վերջն , եւ վեց ամիսն վաշտապետ եղաւ : Սակայն շատ դռներ ալ գոցուեցան հօրս եւ մօրս դէմ : Հօրս համար՝ փոյթ չէր . մանաւանդ թէ կ'ախորժէր ալ . կը սոսկայ մարդամբօխ ժողովներէն , եւ Քիւլափ իրեն կը մնար : Բայց մայրիկս , իւր կեանքն էր տեսակցութիւն , եւ Քիւլապէն ալ չէր :

Հասարակապետութենէն ի վեր գրեթէ ամէն այն դռները բացուեցան . որովհետեւ շատ բան մոռցուեցաւ այն ատեն : Այո՛ , գրեթէ ամէնքը՝ բայց ոչ ամէնքն , եւ ամէնն ալ կռնկի վրայ պիտի բացուին իմ դէմն երբ ըլլամ Կոստուհի տը Մարթէ-Սիմիէօզ : Ամէն տեղ զուարթերես եւ բարի ընդունելութիւն պիտի գտնեմ : Մարթէ-Սիմիէօզներուն քաղաքական ընթացքը բոլորովին անմեղադրելի եղած է դարուս սկիզբէն ի վեր : Չգայթեցին առջի կայսրութեան ժամանակ , չգայթեցին երկրորդին տակ : Ոչ մի կիթոտումն , ոչ մի տկարութիւն :

Առանց նենգի եւ խարդաւանաց Մարթէ-Սիմիէօզները դիւրաւ կրնան ելլել մինչեւ Ժիւլի գարը : Ադրիէնի մայրը... : Դատ բան... պարզ Ադրիէն կ'անուանեմ արդէն : Դատ շուտ է : Ինչ եւ է , իւր մայրը Բիքօն տը Մօնդանեօլ մ'էր : Ուրիշ խօսք պէտք չէ : Ադրիէն ինքնին հրատարակեց՝ հարիւր օրինակ միայն՝ փոքր տետր մը իւր ազգաբանութեան վրայ : Անհերքելի կերպով հաստատեց թէ ինքն երրորդ Փրանսացի կոմսն է — ոչ թէ չորրորդ — երրորդը : Ուղածդ ըսէ... ուղածիդ չափ նախամեծար համարէ՝ բնականապէս՝ սրտի ազնուութիւնն եւ բարութեւ պնդութիւնն , այս աշխարհիս մէջ անուան ալ նուազ կարեւորութիւն տալ չըլլար : Կենաց ժխտին մէջ մեծ դեր մ'ունին այդ տխուրք , այս վայրկեանիս մանուանդ , այս կեղտկարծ աշնուականութեան ողորդ-

ման միջոցին՝ երբ այդ Սպանիացի դուքսերուն եւ Իտալական իշխանազանց ուղիւն զմեզ կ'ողողէ, որ կուգան՝ երբ մեր ծագումն աներկբայելի չէ՝ մենէ վերադաս նստիլ մեր տան մէջ։ Չեմ կրնար հանդուրժել այդ գողափարին որ մեծ խնջոյից մը մէջ՝ խեղճ խեղճ սեղանին ծայրն աքսորուիմ՝ դրամադիտաց եւ գրադիտաց քով։

Ուրիւ բան մ'ալ միտքս կը դադարեցնէր։ Աննշան բան չկայ երբ խնդիրը կայանայ մարդուն ամբողջ կենաց համար քանի մը հանգիստ կարգադրութիւններ տնօրինելու՝ այնպէս որ ամէն դէպքէ եւ ամէն պատահարէ ապահովեալ ըլլան։ Մայրիկս օթեակ մ'ունի Օքէրան երկուշաբթիները։ Շատոնց մօրս հետ համաձայնած ենք թէ ամուսնացածիս պէս օթեակին կէսն իմս պիտի ըլլայ։ Տասն հինգ օր մէյմը մայրս՝ մէկ մ'ես պիտի երթանք։ Լաւ . այդ կը բաւէ։ Կը մնար թէ՛ Բրաւիլիէն երեքշաբթիին։ Մայրիկս... Աստուած գիտէ որչափ աշխարհ տակն ու վրայ ըրաւ — մայրիկս չյաջողեցաւ այդ սարսափելի երեքշաբթի առուր համար օթեակ մը ճարելու։ Իրեն հինգշաբթի օրուան օթեակ մ'առաջարկեցին։ Մերժեց։ Հինգշաբթիին կեղծ երեքշաբթի մ'է։ Տեսարանը նոյնն է։ Բայց ոչ նոյն հանդիսականք։ Բա՛ղդս նայէ . եթէ հետն ամուսնանայի Յունիսէն մինչեւ Դեկտեմբեր՝ ամէն երեքշաբթի թէ՛ աթրը Ծրանսէն առաջին դէմի օթեակ մը կ'ունենայի։ Ահա ինչպէս։ Հօրաքոյր մ'ունի, անդի՛ն հօրաքոյր, ամենահարուստ, անորդի (անկէ ալ պիտի ժառանգէ), տարիքոտ, եւ թէ՛ աթրը Ծրանսէին մէջ վերոյ յիշեալ օթեակին տէր, եւ ամենայօժար այս օթեակն իրեն փոխանցելու, քանզի երեք տարիէ ի վեր ա՛լ թատրոն չերթար։ Երեւակայեցէք թէ կարելի՞ է ասկէ անոյժ հօրաքոյր մը։

Այսչափ ահա իրմէն իմացայ՝ տպուրին եւ պանրին անձրպետին ժամանակ։ Եւ երբ ճաչէն վերջ՝ մայրս վրաս նետուելով ըսաւ . « Ուրե՞մն » . պատասխանեցի իրեն .

— Կա՛նձեմ, մայրիկ, լաւագոյնը դժուարաւ պիտի գտնեմ։

— Ուրեմն եղա՞ւ։

— Գիտնալ՝ մայր, կարգուելու անձինք երկու կ'ըլլան։

— Այդ մասին անխոյժ եղիր. դուք եր-

կուք էք։ Բոլոր ճաշու միջոցին աչքս մէկ մը քեզ մէկ մ'անոր էր։ Խեղբը գլխէն դացած է։

Ինչ յանցանքս ծածկեմ. իմալ կարծիքս այն էր։ Մայիս վրաս արշաւած ատեն՝ ինքն ալ Տիկին տը Մէրսըրէին վրայ կը յարձակէր որ՝ յայտնի է՝ մեզ սեղանակից էր։ Ես էի իւր սիրածը, ես՝ իւր պաշտածը, ես՝ իւր խնդրածը, ես վերջապէս եւ ոչ այլ ոք։ Եւ կը պաղատէր Տիկին տը Մէրսըրէին որ անյապաղ երթայ խնդրէ գիտ մօրմէս։

Տիկինը հարկադրեցաւ զինքը խաղաղելու եւ քացատրելու թէ գործերն այսչափ արագ արագ չէին կրնար քալել։ Մայրիկիս եթէ մնար կարծեմ նոյն երեկոյին գործը կը լմնցնէր։ Սոսկալի վախ մը կըզգար Բիւրմարէններուն կարգադրութիւններէն։ Ես այդ երկիւղը չունէի։ Կըզգայի թէ ինչ տը պաւորութիւն գործեցի վրան եւ կ'իմանայի թէ լիազօր տիրուհի եմ կացութեան։ Ուստի մօրս յիշեցուցի իւր խոստումներն եւ իմ որոշումս հասուն քննութենէ առաջ եղբակացութիւն մը չտալու։ Երկու անգամ միայն զինք տեսեր էի, երեկոյին, երեկոյթի սեւ հագուստով ու ճերմակ վզնոցով։ Բացէ ի բաց կ'ուզէի զինք տեսնել լոյս աչքը ամենօրեայ հանդերձիւ։ Գիտէի թէ այս կարգադրութիւնն ինչպէս եղած էր Մաթիլտ մօրքեռս աղջկան համար։ Երկու անգամ իւր ամուսինը տեսեր էր ցերեկ ատեն, անգամ մը Լուվրի թանգարանն, անգամ մ'ալ ձիարձակարանն։ Հիմա ձիարձակարան չկայ, անոր տեղն առնունք Քլիւնիի Մուսէոնը . որ զինչ եւ է երկու տընջենային տեսակցութիւններս կ'ուզեմ։

Այն ատեն Տ. տը Մէրսըրէ այս առուր համար կարգադրեց ափ յափոյ տեսակցութիւն մ'ի Լուվր, ժամը ձիւղ երեքին, Մուրիլլոյի Աստուածամօր պատկերն տակ։

41 Նոյն օր, ժամ 5

Կը վերադառնանք։ Ժամ մը դահլիճներուն մէջ ձեմեցինք առանց շատ պատկերներու նայելու։ Ինձ կը թուի ալ թէ նկարչութեան Քասին չարաչար ազէտ է։ Բայց ես ալ արուեստագէտի մը հետ ամուսնանալու տրամադիր չէի։ Ախորժելի կերպ մ'ունի, հագուել զիտէ, քիչ կը խօսէ, քիչ մը պաղ է՝ բայց անստուգիւտ, եւ երբէք ասպուշ

բաներ չըսեր : Եւ Րիփօրի փողոցը՝ հաղիւ մինակնիս գտնուեցանք՝ կառքին մէջ՝ մօրս մէկ նոր յարձակումը յետս մղելու հարկադրեցայ :

— Ձգտնուած պատանի մ'է , եւ կարծեմ Բիւլենիին համար չես պնդեր :

— Ոչ . աւելորդ է : Զնջենք Բիւլենին :

— Փառք Աստուծոյ . — որոշումը առի՞ր :

— Դեռ չէ , մայրիկ , դեռ չէ . — Այսպէս կարգուիլ չըլլար՝ մարդու մը միայն հարասութիւնն ու կացութիւնը քննելով :

— Հասա դեռ ի՛նչ կ'սեպես :

— Հեծեալ տեսնել զինք : Ինք զիս ձիու վրայ տեսաւ , եւ ես չտեսայ :

Միով բանիւ՝ Տ. տը Մէքսըրէ՝ իւր անխոնջ անձնուիրութեամբ այս երեկոյ կ'երթայ անոր թեղադրելու որ վաղն առաւօտ ժամը վեցին երթայ Աքսսիայից ծառուղւոյն մոտից առջեւ երթեւեկելու : Անոր անուշութեամբ մը պիտի հասկըցնէ թէ շատ հաւանական է որ հայրիկս ու զիս հոն գտնէ : Վասն զի հայրիկս... Ահ... իրաւ , իրաւ . հօրս ըրածին խելքս չհասնիր : Այսինքն թէ կարգուելիք աղջկան հօր դերը պատուական կերպով կը կատարէ : Ձորս տարի է որ ձի հեծած չէ , եւ վաղն առաւօտ մէջքիցաւ մ'աչք առնելով՝ ընդ խնդրոյ պարագայից ձի պիտի հեծնէ :

Նոյեմբեր 30

Ներքս ի միասին անտառին շուրջը ձիաւարեցինք , հայրիկս՝ ինք ու ես : Շատ կատարեալ կ'աշտանակէ : Խայտաբղէտ հրաշագեղ մատակ մը հեծած էր : Զայն ինձ պիտի առնում՝ եւ Թրիպուլէն անոր պիտի տամ , զոր ալ շատ աղէկ ճանչցայ եւ որմէ քիչ մ'ալ ձանձրացած եմ :

Ի դարձին մօրս վիզը փաթթուեցայ :

— Այո՛ , մայրիկ , այո՛ , ըսի . հարիւր անգամ այո՛ :

Եւ շնորհակալ եղայ իրեն արտասուալից աչքը՝ որ այնչափ ներողամիտ եղաւ իմ նրկատմամբ՝ այնչափ բարեսիրտ եւ հանդուրժող , եւ զիս չըռնապրօսեց , եւ ուզածիս չափ մտածելու միջոց թողուց :

Դեկտեմբեր 4

Այսօր ժամը երեքին , պառաւ հօրաքայրը , երեքշաբթիներու օթեակին հօրա-

քայրը , պաշտօնապէս զիս խնդրելու պիտի դայ , եւ Յունուար 10էն առաջ (բացէ ի բաց պէտք է՝ մեծ մօր միլիոնին պատճառաւ) Կոնստանտինուպոլիս Մարթէլ-Սիմիէօզ պիտի ըլլամ : Աղբիւնն պիտի ընդունի մէկուկէս միլիոն ֆրանքն՝ եւ զիս ալ ձրիաբար վրայէն : Ինձ կը թուի թէ ախորժելի կերպով վաստակուած դրամ մը պիտի ըլլայ : Այդչափ ցաւակցութեան արժանի չերեւիր ինձ այդ պարոնը :

Դեկտեմբեր 11

Մեր ամուսնութիւնը Յունուար 6 ին սահմանուած է : Շատ այլանդակ բան է այդպիսի միջոցի մը կարգուելի՝ կաղանդչէքի պէս : Բայց հարկը կը պահանջէ : Միլիոնը , միլիոնը... Ուր թողունք որ քիչ մը մտածելով այդ թուականն ինձ անհաճոյ չէ : Փոքրիկ՝ ամենախորքիկ ամուսնութեան ուղեւորութիւն մը պիտի ընենք : Պտոյտ մ'ի Նիս . ութը տասն օր առ սուսեւն : Յետոյ Բարիզ , Բարիզ , իւր ամէն լուսարձակութեամբ , բոլոր փոքր թատրոնները բաց , հօրս սիրուն թատրոնիկները : Այդ տարաբաղդիկ Նուիզ տը Մօնպրիան անցեալ գարնան երկամսեայ ուղեւորութիւն մ'ըրաւ՝ և Բարիզ դառնալուն զայն հրատուցող դժպիսի՝ անմարդաբնակ գտաւ : Վարիէթէի թատրոնն ալ գոց էր : Դեռ անցեալ չաթուկըցաւ Ժիւսիքը լսել՝ ամուսնութեանէն եօթն ամիս վերջը :

Կատարեալ երջանիկ պիտի ըլլանք մենք , բնաւ չեմ կասկածիր : Կը պաշտէ՞ զիս . — Ես զի՞նքը... կը սիրեմ... ես ինձմէ ծածկելու բան չունիմ... : Սուտ խօսած կ'ըլլայի եթէ պատմէի՝ անգլիական միապետութեան մը պարբերութեամբ , թէ իւր սիրով ցնորած եմ , թէ այլ եւս չեմ ապրիր երբ ինք հոն չէ... թէ կը դողդողամ իւր ռոմանօյնը լսելու , թէ իւր ձայնին հնչիւնը սարսուռ կ'ազդէ ոսկերացս , թէ զինք տեսնելով նոր կեանք կ'առնում... : Ո՛չ , ո՛չ , այդչափ դիւրաւ չեմ : Սրաէս պահանջելու չէ որ այդչափ արագ երթայ... : Բայց արդէն շատ բարեկամութիւն ունիմ իրեն հետ , շատ գորով . սէրն ալ կուգայ , տարակոյս չունիմ :

Ի՛նչ խնայութիւն է տան մը մէջ սէրը... իրեն միլիոն մը կը տանիմ , եւ տուն կը մըտ-

ներք երկու երեք հարիւր հազար ֆրանք եկամուտով... մեծ կ'երեւի այս դումարն, եւ սակայն այնչափ չէ...: Ութսուն հազար ֆրանքի չափ հաշուելու է Սիմիթօղի (մեր Վանատէի գլեկին ծախուց) եւ սրտոց համար: Այլ մնայ ուրեմն ապրելու համար հարիւր յիսուն հազար ֆրանք, բաւական գումար մը եթէ սիրենք զիրար՝ եթէ՝ զուգահեռ ընթանանք կենաց մէջ՝ միատեղ քաղող մտերիմ ընկերներու սէս...: Եթէ ընդհանուր կ'անակն ժամանակէ մը յետոյ սկսինք — եւ ընտանեաց շատին ալ պատմութիւնն այս է — մէկը մէկ կողմ քաշել միւսը միւս կողմը, իւրաքանչիւրներուս վաթսուհական հազար ֆրանք միայն կը մնայ... եւ այդ նեղը մնալ է...: Նիցուք թէ՛ թատրոնը՝ Օրէրայէն եւ Ֆրանսէներէն զատ՝ տարին երկու երեք հազար ֆրանք արժէ. եթէ այլ եւ կին միշտ միատեղ երթան նոր խաղերը տեսնելու — իսկոյն հինգ վեց հազարի կը հասնի ծախքն. եթէ զատ զատ երթան... եւ ամէն բան ասոր նման... Պիւտճէն կը կրկնապատկի:

Ահա զոր օրինակ Քարօլին եւ իւր ամուսինը... հարիւր հազար ֆրանք միայն եկամուտ ունին... արծակ արծակ կ'ապրին՝ ուռանց հաշուելու: — Ինչո՞ւ, որովհետեւ զիրար կը սիրեն: Փոքր սպարանք մը կը բռնակին, ամենափոքր՝ որ շատ սպասաւորաց պէտք չունի: Քիչ անգամ մարդ կ'ընդունին, եւ հազիւ երբեք ասոր անոր կ'երթան: Որչափ իրարու մօտիկ են, այնչափ միայն են, այնչափ ալ դոհ են, եւ Քարօլին կատարեալ երջանիկ է իւր թուալէյին համար տարին 15 հազար ֆրանք միայն ծախսելով:

Իսկ Քրիստինէ՞. խեղճ աղջիկ... Չուզելով կարգուեցաւ:

Մօրն աշուրհերը տխուրսէն չլացած էին...: Աղջիկը Դքսուհի...: Այդ բան մ'է, անտարակոյս, շատ ալ բան է. բայց ամէնն ատով չլմնար: Ինչ եղաւ հետեւանքը. — Կոնդրանի հետ իւր ամուսնութիւնն ալ իսկոյն սուսին չարթէն սկսեալ ձախող զընաց: Եւ սաստիկ նեղութեան մէջ են իրենց 280 հազար ֆրանք եկամտով: Խենթ խենթ ստակը կը վատնէ Քրիստին տնակէր ցնորքներու եւ սեթեւեթից: Տարակոյս չկայ որ շատ աւելի սուղի կը նստի ամէն

մարդու հաճելի ըլլալու փափագիլը քան մարդու մը միայն: Դուքսը խաղի սկսաւ... արդէն իւր ստացուածոց կէսը մէջ խաղաց:

Քարօլին վերջերն ինձ կ'ըսէր. «Ամուսնանալուդ պէս՝ նայէ որ ամուսինդ սիրես. մեր աստիճանի ընտանեաց համար տարեկան հարիւր հազար ֆրանքի խնայութիւն մ'է. եւ եթէ ոչ առ յօժարութեան՝ գոնէ առ հաշուոյ այլ եւ կին սիրելու են զիրար»:

Այո՛, պիտի սիրեմ զինքը. պիտի սիրեմ: Եւ գեւ Դեկտեմբեր 11 ենք...: Մինչեւ Յունուար 6ին՝ տակաւին 26 օր ունիմ:

Թարգմ.

ԼԻԻՏՈՎԻՔ ՀԱԼԷՎԻ

Թ. ԹԵՐԶԵԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ձեռքն եւ ՇԱՐԺՈՒՄՆ

«Յեկարօ» իւր գրական շարժաթերթին վերջին թիւերէն միոյն մէջ հետեւեալն հրատարակած է, քաղեալ գեղեցիկ եւ հետաքրքրաշարժ գրքէ մը որ ի մտոյ պիտի հրատարակուի եւ որուն վերնագիրն է «Բաղդատական դիմագիտութիւն. Տեսութիւնք ի վերայ արտայայտութեան ի մարդն, ի բնութիւնն (ե. յարուեստս)»: Մէք ալ արժան գնացնիք մեր ընթերցողաց ներկայացնել այդ կտորն, ըստ որում յի է բաղմնակոյմանի տեսութեամբք եւ լուրջ դիտողութեամբք:

Ձեռաց ճշգրիտ արտայայտութիւնն իրենց շարժումներն են: Հոգ է որ ատենաբանն, երգիչն, դերասանը կը գտնեն իրենց յառաջ բերած տպաւորութեանց անըստաւելի աղբիւրը: Ալօթքի, վշտի, ուրախութեան մէջ, երբ մարդն կը հրամայէ կամ կը պաղատի, իւր ձեռներն, թէ՛ վեր բարձրացած, յերկիր խոնարհած կամ օդին մէջ տարածուած, կը թռին մարդուն մը տածումը ցանել սփռել օդին մէջ:

Ընկերային յարաբերութեանց մէջ, ձեռքն միթէ իրօք սրտերու միջեւ փոխանակութեան գործին չէ՞: Բարի դալուստ կը մաղթէ, սասնջականութիւն կուտայ, բարեկամութիւնը կը կնքէ. ձեռաց վրայ է որ մարդ կը կրէ տեսանելի նշանն այն կապին որ իրարու կը միացնէ համակրութիւններն կամ ճակատագրերն:

Եւ այն ամենագործերիկ գլխաւորն մէջ
զոր չեմ համարձակիր անուանել: Եթէ ձեռ-
քերն ուրիշ ու եւ է բանի մը չկարենային ծա-
ռայել, արդէն իսկ մեզ համար անգնահա-
տելի արժէքով յուսուած մը չը պիտի լինէին:
Ի բաց առեալ ոտքերն, որք քիչ մը շատ
հեռուն եւ շատ վարն են, ձեռքերն այն
մասերն են որք կրնան աւելն աւելի հե-
ռանալ մարմնէն, եւ երբ երկու մարդիկ
կեցած են, այնպէս կը լինի որ ձեռքերն
ստեղծ թէ նախախնամական չէ՞ այս, —
մարմնէ՞ մը հեռանալով միւսին կը մօտե-
նան:

Մարմնոյն բոլոր միւս մասերն դիտել
միայն կարելի է, եւ ոչինչ աւելի՝ ձեռ-
ներն, ընդհակառակն, կարելի է տալ զայնս,
կարելի է առնուլ. ո՛չ միայն հաճոյք մ'է
այս, այլ պարտականութիւն մը, եւ մէկէ
աւելի պարագայից մէջ պատշաճից օրէնք
մինչեւ իսկ կը հրահանեն համբուրել զայն:

Հետեւաբար կարող ենք ըսել թէ ձեռ-
ներն հոգւոյն թարգմաններն եւ դեսպան-
ներն են, եւ թէ սրտերն իրենց դաշնակ-
ցութեանց լաւագոյն մասը կը պարտին նո-
ցա, որովհետեւ, դժուարին պարագայից
մէջ, կրնան ընել զոր ինչ շրթունք երբէք
չպիտի համարձակէին ըսել:

Այս գրքին դիմաց արտայայտութեան
նուիրեալ մասին մէջ պնդած ենք ձեռաց
դերին ծանրագոյն կարեւորութեան եւ
այն ակներեւ յարակցութեան վրայ զոր
կը ներկայացնեն իրենց ձեռաց եւ կերպին
մէջ՝ դիմաց գծերուն հետ: Կրնանք ուրիշ
յարակցութիւն մ'ալ հաստատել շարժում-
ներու մասին, եւ չենք վարանիր հրաւիրել
զընթերցողն որ անձնական դիտողութեամբ
համոզուի թէ ձեռաց գործունէութիւնն
կամ անշարժութիւնն ո՛րքան կը համեմատի
դիմաց գործունէութեան կամ անշարժու-
թեան հետ: Թող ուշադիր կերպիւ հետա-
քնեն, եւ երբէք միեւնոյն անձին վրայ չը
պիտի գտնես անշարժ գէմք մ'եւ գործօն
ձեռք մը, կամ արտայայտիչ գէմք մ'եւ հան-
դարձ ձեռներ: Տարակոյս չկայ թէ իւրա-
քանչիւր մարդ առաւել կամ նուազ շար-
ժուններ կ'ընէ, տարակոյս չկայ թէ բա-
ւոյք, դատարարականութիւն, սովորոյթք,
ցեղ, կը ներգործեն շարժման առաւել կամ

նուազ յաճախականութեան կամ արտա-
յայտութեան վրայ, բայց բոլոր այդ ազ-
դեցութիւնք միանգամայն կը ներգործեն
դիմաց գծերուն շարժման վրայ, եւ նոյն
ուղղութեամբ կը նշանակուին անդ:

Ձեռաց շարժումներու քննութեան ձեռ-
նարկելէ առաջ, հարկ կը համարենք դեր-
լիւսան եւ բացարձակ դիտողութիւն մ'ընել
առաջ. այն է թէ առհասարակ, ի հաշիւ առ-
նըլով անշուշտ նկարագրի կամ միջավայրի
ազդեցութիւններն, ձեռաց սովորական
գործունէութիւնն՝ դիմաց գծերուն շար-
ժականութեան նման՝ մոտային գործունէու-
թեան, այսինքն խոնարհականութեան յոյժ
հաւանական նշան մ'է: Միշտ կը պատա-
հիս անձերու, որք չեն կրնար կենալ ա-
ռանց առարկայի մը հետ խաղալով, կամ
եթէ բան մը չգտնեն՝ իրենց մատները կը
շարժեն. հաղուադէս է որ այդ անձինք
յոյժ խելացի չլինին: Իրենց ձեռներն, գըր-
գըռեալ իրենց անգործութենէն, կը նմա-
նին այն ահիպարանոց եւ խստերախ նը-
ժոյղներու, որք կը վրձեն ու կը դռվեն,
անհամբեր սպասելով այն ժամուն ուր կըր-
կէսին մէջ պիտի խոյանան: Մանկանց հա-
մար նշանակութեան արժանի յոյժ կարեւոր
կէտ մ'է այս. նպաստաւոր գուշակութիւն
մ'է այս անոնց ապագայ խոնարհականութեան
համար:

Ձեռքը կը բացուի, կը դոցուի, կը սեղմ-
ուի, կը լայննայ. ափն հակառակ կամ ուղիւ
կողմը կը դարձնէ. կը շարժի գլխու շուրջն,
կուրծքին մօտ, կամ աւելի վար, առաւել
կամ նուազ մօտենալով գլխուն, սրտին կամ
գետնին. մատները կը տարածուին, կը կըծ-
կին, կը դոցուին, ամենքն ի միմասին կամ
միայն մէկ քանինները. աւաւիկ՝ մէկ քանի
բաւով՝ ձեռաց յատուկ շարժումներուն հա-
մառօտ ամբիփութիւնը:

Այս շարժումներ կը զանազանին ազդու-
թեամբ, լայնութեամբ, արագութեամբ.
աւելորդ պիտի լինէր ըսել առաջ թէ ինչպէս
կը ներգործեն արտայայտութեան վրայ. այս
կէտին վրայ զընթերցողն կը զրկենք թեւին
շարժմանց վրայ խօսուած գլխոյն:

Յիշենք միայն թէ թեւին շարժումները,
որք յաճախ կ'ընկերանան ձեռաց շարժում-
ներուն, կը հաստատեն եւ կը պարզեն ար-
տայայտութիւնը:

Զայս ըսելէ յետոյ, կը մնայ մեզ միայն վերադառնալ ընդհանուր սկզբանց՝ որոշելու համար ձեռաց արտայայտութիւնքը:

Ամեն ինչ որ կը ձգտի բանալ, լայնցնել ձեռքն, ամեն ինչ որ կը տարածէ կամ կը հեռացնէ մատներն, կը նշանակէ պայծառութիւն, լայնութիւն, ճշմարտութիւն, պարզութիւն, դիւրութիւն:

Ամեն ինչ որ կը ձգտի գոցել, սեղմել ձեռքն, անոր ծաւալը նուազեցնել, նշան է մթութեան, սահմանափակութեան, տարաւորութիւն, կնճռոտութեան, դժուարութեան:

Ո՛րչափ այդ շարժումներն ազդուութիւն կամ արագութիւն ունին, ա՛յնչափ բուռն եւ յանկարծական է զայնս. ներշնչող զգացումն կամ մտաւորական գործողութիւնն:

Շարժումներ կան, որք ա՛յնչափ հոմանիչ են զանազան զգացմանց հետ, որ անոնց բացատրութիւնը բայի մը կը համապատասխանէ. «բուռը ցոյց տալ» կը նշանակէ «սպառնալ», «մատանիչ ընել» կը նշանակէ «ուշադրութիւն հրաւիրել», և ըն. և ըն.:

Թեթեւ սպառնալեաց, որոշողութեան եւ այլ շարժումներն, որք յառաջ կուգան ցուցամատին առաւել կամ նուազ կծկմամբ, յոյժ ծանօթ են եւ հարկ չկայ երկարօրէն խօսիլ անոնց մասին:

Մատները ճակտին կը կրթնցնեն՝ մտաց առջեւ բերելու համար յիշատակ մը. արժով կը սեղմեն զայն՝ ուշադրութիւնը կեդրոնացնելու համար. կը քերեն զայն, դժուարութենէ մը զերծանելու միջոցներ գտնելու համար. ականջը կը քերեն՝ երբ մարդ յոյժ տաքնապալից կացութեան մէջ կը գտնուի: Եւ ինչպէս որ լուէ մը խայթում առնէ մարդ կը քերուի, «ականջին մէջ լու մ՛ուռնենալ» խօսքը ֆրանսական առածից կարգն անցած է՝ ցոյց տալու համար մարդ մը որ չգիտէ ի՛նչ ընել:

Կզակը ձեռաց մէջ առնուլ եւ դգուել զայն, կը նշանակէ՝ ամեն մարդու համար՝ թէ կը փնտռես եւ կը խորհլս գործածուել լիք միջոցը:

Վերջապէս, «ձեռները չփել», որ ուրախութեան նշան մ'է, ընթացիկ լեզուոյն մէջ կը գործածուի իբր հոմանիչ «հրճուել» ու կարելի է նոյնն ըսել «ծափահարել» ու մասին, որ ամեն ժողովրդոց մէջ եւ ամեն ժամանակ եռանդալիւ հաւանութեան նշանն

եւ յոխարբերութիւնն եղած է միշտ:

Ուրիշ շարժում մը, այն է բթամատը քթին ծայրին կրթնցնել եւ միւս մատերը երկնցնելով շարժել, ամեն քաղաքակիրթ ազգաց մէջ ծաղրական նշան մ'է: Ինչո՞ւ: Ըստ իմ կարծեաց, որովհետեւ այդ շարժման գլխաւոր արդիւնքն է քիթը տափակցնել՝ որ յառաջ կուգայ բթամատին ճընշմամբ, եւ որովհետեւ միեւնոյն ժամանակ մատները ցոյց կուտան ծաղու ենթարկեալ անձը: — «Տափակ քիթ» դուռն, աւասիկ այն հեռագիրն որ խօսուին լեզուով պիտի թարգմանուէր սապէս. «Տափակ քիթ ունիս դուռն», այսինքն «ապուշ մ'ես»:

Յիշատակենք նաեւ, որովհետեւ կարելոր է իբր նմոյշ հին անհետացեալ սովորութեանց, գէթ Ֆրանսայի համար, այն շարժումն որ կը կայանայ բթամատով միջամատն եւ մատանիմատն բռնելու եւ ցուցամատն ու ձկնթն երկնցնելու մէջ, եւ որ կը կոչուի «կոտոջ ցոյց տալ»: Այն սովորք որ կը գործածեն զայն իբր ծաղրական միջոց մը, կամ իրենց դիմացինը բարկացնելու համար, չեն գիտեր թէ կը կրկնեն նշան մը որ ի հնումն կը գործածուէր շար ոգիները վանելու կամ գէշ աչքէ զերծ մնալու համար: Այս նշան կը գործածուի տակաւին յիստալիս, մանաւանդ ի Նաբոլի, ուր բազմաթիւ անձինք կորսուած պիտի համարէին իրենք վիրենք՝ եթէ իրենց վրայ չուռնենային փոքրիկ եղջիւր մը, կամ բացուած մատերով ձեռք մը՝ պահպանելու համար զիրենք գէշ աչքէ:

Այդ օրինակներն կը բաւեն զընթերցողն նմանօրինակ բազմաթիւ դիտողութեանց ճանբուն վրայ դնելու: Պիտի կրնայ ամեն վայրկեան այդ դիտողութիւններն ընել սովորական շարժմանց մասին, որոց ամեն օր կը հանդիպինք մեր առօրեայ կենաց մէջ:

Ուրեմբն ալ իւր շարժումներն ունի, ինքնաբերական կրկնութիւն երկու կամ երեք շարժումներու որք միշտ միեւնոյնն են եւ որք նախակարապետ նշաններն են մահուան: Օրհասակաւն սաւանը կամ անկողինը կը սեղմէ բթամատին եւ ցուցամատին մէջ տեղ, կամ բազուկը շրջանակաձեւ վեր կը վերցնէ, իբր թէ բան մը հեռացնել ու գէր:

Այսոքիկ են գերադոյն շարժումներն

այն կենդանի արձանին, զոր վար առինք իւր պատուանդանէն՝ ողբերկեւ համար այն արտայայտութեամբ զոր հոգին եւ բընութիւնը կրնային տալ իրեն։ Քանի մը վայրկեան եւս, եւ մահուան ստուերները, թատրոնի վարագոյրի մը պէս, պիտի լծնեն նորա դիմաց դռան շրջանը։ Բանականութիւնը չիթած է, զգացմունք մարած են, աչքերը չեն տեսներ, բերանը անխօսուն է, բայց այդ վերջին վայրկեաններուն մէջ խի՛ստ ձեռները կը շարժին։ Կարծես թէ կը ջանան կենաց կառչիլ։

Գիտողութիւն մը միայն պիտի ներկայացնենք ձեռները դարձնելու կերպերուն վրայ։ Այն զգացմանց մէջ ուր սիրտն կը զեղու, որպէս անկեղծութիւնն, վստահութիւնն, համոզում, սէր, խօսելու ատեն շարժողով մարդն իւր ձեռները կը ներկայացնէ ափն օգին մէջ։

Մահվտականաց բով, որոց կրօնական զգացումն այնքան զօրաւոր է, աղօթք կը կատարուին թեւերը տարածուած կամ վեր համբարձած, ձեռները բացուած, ափն դարձած դէպ յերկինս։ Այս շարժումն ի գործ կը դրուի նաեւ հռովմէական ծէսերու մէջ՝ երկնային սաշտաման հանդիսաւոր վայրկեաններուն։

Ասոր հակառակ տրամադրութիւնը ամեն օր կը տեսնուի՝ ողջունելու համար ձեռք թոթուելու եղանակին մէջ։ Անկեղծութեամբ տրուած ձեռք մը ափն օգին մէջ կը ներկայացնէ, իսկ հակառակն է երբ անվստահութեամբ կամ կասկածանք կուտաս ձեռքդ։ Այս կերպ կ'ընեն ընդհանրապէս երկչոտ կամ նենգամիտ մարդիկ։ Ընդհանուր առմամբ, այս վերջին եղանակն նշան է վանողական կամ ամբողջական զգացման մը։ Այս բան հաստատութիւն կը գտնէ մանաւանդ սա գիտողութեամբ թէ, երբ մարդ զգուշանայ, զրեթէ անկարելի է թեւերը կքել եւ կամ զայնս իւր վրայ բերել առանց ափն հակառակ կողմ դառնանալու, թեւերու ոսկերաց յօդաւորման պատճառաւ։ Արդ, յայտնի է թէ վանողական զգացումներն թեւերը մարմնոյն վրայ կը բերեն։

Ափն ձեռաց ներքին երեսն է, եւ շօշափելու կարողութեան գլխաւոր կեդրոնը։ Իւր մակերեւոյթին միջոցաւ է՝ որ կրնանք

լաւ մը շօշափել առարկայներն եւ մարդիկ։ Ուրեմն մեզ շրջապատող առարկայից հետ զմեզ հաղորդակցութեան դնող գերազանց գործին է այն։ Աւասիկ ինչու համար ո՛րչափ աւելի համակրելի եւ փափաքելի է մեզ հաղորդակցութիւնն, ա՛յնքան աւելի տրամադիր ենք ի յայտ ածել այն մասն որ անոր կեդրոնն է։

Ձեռաց արտայայտութեան գլխաւոր կէտերու վրայ մեր գիտողութիւններն աւարտելու համար, կը մնայ մեզ նշանակել կարեւոր որոշողութիւն մը, զոր պէտք է ընել յայնմ, որուն՝ եթէ կարելի է՝ ջարժմանց գօտին՝ անունը պիտի տանք։

Ինձ կը թուի թէ եթէ ի նկատ առնուի հորիզոնական բարձրութեան աստիճանն որուն կը հասնի ո եւ է շարժում, կարելի է շատ ճշգրտութեամբ դայիս վերագրել այլ եւ այլ զգացումներու եւ մտածմանց։ Եւ ես չեմ վախճար որ ուշադիր դիտողներ ի սուտ հանեն զիս, եւ կը հրապարակեմ թէ՛

Երբ ձեռքը գլխուն մօտ կը բարձրանայ շարժում մը կատարելու համար, ըսել է կը ջանայ հաստատել, ի յայտ ածել մտաւորական գործողութիւն մը։

Երբ սրտին կը մօտենայ, այն ատեն կը վկայէ զգացման մը, աւելի հաղորդակցական զօրութիւն մը տալու համար նմա։

Վերջապէս, երբ մէջքէն աւելի վար կ'իջնէ, իւր շարժումներն մասնաւորապէս կը վերաբերին կամքին որոշմանց, գործողութեանց, իրողութեանց, ուր ո՛չ իմացականութիւն եւ ո՛չ զգացում գորեղ կերպիւ կը խառնուին։

Ի բաց առեալ փորձառական դիտողութիւններն, զորս ամեն մարդ կրնայ ընել, կարելի է ըսել թէ խորհրդանշանաց ա՛յնքան հաստատուն օրէնքն յոյժ ճշմարտանշման կիրառութիւն մը պիտի գտնէր աստ։ Ամեն իմացական եւ զգայուն էակի բնութեան մէջ զօրութիւն մը կայ որ արտայայտիչ անդամները կը տանի դէպ այն մասն որ անոնց կեդրոնն է։ Այսպէս, մարդն իւր ձեռներն ուղեղին կամ սրտին կը մօտեցնէ ցոյց տալու համար թէ ի՛նչ կ'զգայ կամ ի՛նչ կը մտածէ, բացարձակապէս նման այն անասնոյն որ զեղեցիկ դէմքեր կ'առնու երբ կ'ուղէ գգուել կամ շողքորթել, կամ իւր վերքը կը խածնէ՝ երբ վիրաւորուած է։

ԷՕԺԷՆ ՄՈՒԹՈՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆԻՔ(1)

Ի Քար-բերդ ստորերկրեայ մի ան-
ձաւ կայ ուր յուլիսի եւ օգոստոսի հեղձու-
ցիչ ջերմութեան հակառակ կը տիրէ ձմեռ-
նային ամենասաստիկ ցրտութիւն, որ հաս-
տատուն սառոյցներու կը փոխէ քարանձա-
ւին մէջ ինքնին դոյացող ջրային մաքուր եւ
մշտահոս հեղուկ մը : Այդ սառոյցներն մեծ
քանակութեամբ Քար-բերդ քաղաքը փո-
խադրուելով կը վաճառուին : Քարանձաւն,
որ նեղ անցքէ մ'ի զատ լուսամուտ եւ ճեղ-
քուած չուսի բնաւ, խոր է ոչ ինչ աւելի
քան 50 մետր :

— Քար-բերդ սկսած է կոչուիլ այս քա-
ղաքն ժամանակէ մ'ի վեր, որ նախ Քար-
բերդ կը յորջորջուէր սովորաբար : Այս եր-
կուքէն որոյ ստոյգ լինելն թողլով այլոց վի-
ճիլ, ինչպէս երբեմն կը վիճէին, զայս եւ
եթ կ'ուզենք յայտնել անցողակի իմն թէ
քաղաքին մէջ գտնուած քարակուռ բերդն
առաջին անունը արդարացիաբար կարող լի-
նին ի նախ անունով, ամէն տեսակէտով
լաւ է Քար-բերդ անունը նախամեծար հա-
մարել քան Սաբէրդ, որ որոշ նշանակութիւն
մը չունի :

— Ի վասպուրական, ի Տուրուբերան,
ի Չորրորդ-Հայոս եւ ի մասն ինչ Աղձնեաց եւ
ի Բարձր-Հայոց պաշտած լինելով՝ զանա-
զան վանքեր տեսանք, բայց ոչ մին ունէր
Արդնու Բարձրահայեաց վանքին պէս նիւ-
թական լաւ եւ անխռով վիճակ : Միւսներն
ընդհանրապէս երկպառակեալ լինելով նիւ-
թական եւ բարոյական խիստ անկման մէջ
կը գտնուէին : Բայց հայեաց վանքն որ
գտնուէն իբր 4000 ոտք բարձր լեռան մը
ճիւղ գաղաթին վրայ կառուցուած է, ու-
նենալով չորս կողմէն խիստ մեծ տարածու-
թեամբ լայնարձակ դաշտ, այդ անունն
առած է ըստ աւանդութեան միաբու-
նիցն « է Բաբէ հայեաց » ձայնէն զոր Ս.
Աստուածածին՝ Յիսուս ի գիրկն երեւելով՝

այդ տեղէն՝ կանչեր է առ թաղէս ա-
ռաքեալն որ Նդեսիսցէն, ուսկից Տ օրուան
ձանրայ է, այդ կողմերը դալով վանք մը
կառուցանելու յարմարաւոր տեղ կ'որոնէր :
Ս. առաքեալն այդ ձայնին վրայ կ'որոշէ չի-
նել վանքն ուր է այժմ : Աւելորդ է ասել
որ այս աւանդութիւն սրբազան նուիրա-
դործում սուած է այդ վանքին իբր առա-
քելուէն եւ հին ու ժամանակակից առա-
քելոց :

— Բազում դիւղերու մօտ ցաւան խաչ
անուամբ մեծ կոթողներ կան կանգնուած
երեսն յարեւելս կոյս, որոց վրայ քանդակ-
ուած են մեծ կամ փոքր խաչեր : Ժողո-
վրդեան ջերմեանդութիւնը կը հաւատաց
թէ կը պահպանեն դոքա գիւղերն չարին
այցելութիւններէն : Զաք ըսելով Դէ- կը
հասկնան գիւղացիք :

— Որպէս ի հնումն օրէն էր դիցապաշ-
տից ծառեր յամ անտառներ նուիրել զից,
նոյնպէս այժմ բազմաթիւ տեղեր յայտնի
կամ անյայտ Սուրբի մը նուիրեալ ծառեր
կամ անտառներ կը գտնուին Սաբէ ծա-
կամ ծառէր անունով, որոց ոչ ոք կը հա-
մարձակի ճիւղն անգամ կտրել եւ որք
Հայերէ կամ Թուրքերէ միանգամայն կը յար-
գուին անխտիր : Հասարակ մարդիկ, մանա-
ւանդ կանայք լաթի կտորներ կը փակցնեն
այդ պիսի ծառերու իբր թէ նուէր կուտան :
Վերջին ժամանակներս բողբոջահանք, մանա-
ւանդ բնիկ Ամերիկացիք յանդիւնեցան կըտ-
րատել այդ Զաքիան ծառերէն շատե-
րը, այլ դեռ չպատժուեցան, թէպէտ հա-
ւատացեալ գիւղացիներ պատիժը անխու-
սափելի կը կարծեն, որ եթէ ոչ յաստիս
դէթ ի հանդերձելումն պիտի քաշեն յան-
ցաւորներն :

— Մէն մի գաւառի մէջ խելք պալաս ը-
սելու տեղ զանազան դարձուածներ կը գոր-
ծածուի, որոց մի քանիսը կը նշանակենք .
Վանեցիք կըսեն պալաս պալաս, Վերնապո-
լաս, Բէր պալաս Դ. (այսինքն դուռն է
գլուխը), Լեռ Դ. Հայոց մէջ ալ կը գործած-
ուի շապիկ կարճ, Բապակի արդ առաջ վերն
դիւն ցաւէր է, (որով ջուր չկրնար ընդունիլ), Լեռ :
Հեգնական ուրիշ շատ ձեւեր ու ոճեր ալ
կան :

(1) Իս « Հանապարհորդական յիշատակարան » էն
բաղրած :

ԶԱՆԱԶԱՆՔ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՈՒԻԼՀԷԼՄ ԿԱՅՄՐՆ

Մալիե Էսթանէլ հանդիսին վերջին թիւերէն միոյն մէջ հրատարակուած է յօդուած մը «Արիւրիկեան Դեսպանատնի տնտեսական և Պէրլինի Ընկերութիւնն» վերնագրով, ուր Ուիլհէլմ կայսեր մէկ նկարագիրը կայ շահագրգիռ եւ դրաւիչ կերպիւ գրուած:

Քանի մը օրէն, մարտ 22ին, Գերմանիոյ վեհապետն իւր 89րդ տարին պիտի թեւակոխէ: Ծնած է 1797ին եւ երեք անգամ Փարիզ մտած է յաղթանակաւ, 1814ին, 1815ին եւ 1871ին: Անցեալ նոյեմբեր 15ին դեռ անձամբ կը բանար Նրեյտիմանական Ժողովոյ նստաշրջանը: Այս այս մասին թողունք որ հանդիսին թղթակիցը խօսի:

«Նրեյտիմանական Ժողովոյ սրահին տեսքն պատկառելի եւ շաղկապիչ էր: Համադրեցանք, չքանչանքներու, զինուորական գլխարկներու եւ գարգմանակներու անտառ մ'էր, որովհետեւ գրեթէ ամենքն ալ առանց բացառութեան արքունեաց զգեստ հագած էին: Այն բաղմամբ երեսփոխաններն որք պաշտօնատար են կամ սպայ Լանտուէրի, իրենց պաշտօնական զգեստն հագած էին: Ճիշդ կէս օրին, կայսրն իւր ետեւէն ունենալով իշխաններն եւ իւր ձախ կողմն նախարարապետը, սրահը մտաւ:

«Ուիլհէլմ կայսրն այսօր ութսուն եւ ութ տարեկան է. գեղեցիկ բան է այդ տարիքին մէջ անձամբ բանալ Նրեյտիմանական Ժողովը, բայց խոնջեցուցիչ է: Տարիներն ի գործ կը դնեն իրենց իրաւունքները. կայսեր դէմքը մագաղաթի նման խորշմած է. քայլուածքն երերուն է, եւ հազիւ լսելի ձայնիւ է որ կը կարգայ արքայական ճառն, համառօտ եւ անշան, գրուած Պիլմարք իշխանէն: Խորին լուրժիւն կը տիրէր բովանդակ սրահին մէջ, եւ սակայն կարելի չեղաւ բառ մ'իսկ լսել: Վայրկեան մ'ալ ընթերցումը բոլորովին ընդհատեցաւ. թեւեւ դողում մը, բայց սակայն տեսանելի ամենուն, սարսափալց ինտուիմալայ վահապետին հատած մարմինը: Կարծուեցաւ թէ պիտի նուաղէր: Պ. ար Պիլմարք, որ

աչերն սոսկալի յարատեւութեամբ մը սեւեռած էր իւր տիրոջ վրայ, արդէն պատրաստ էր խոյանալ յօդնութիւն նուաղելոյն: Բայց բնաւ պէտք չեղաւ օգնութեան. կայսրըն պարզապէս սխալ դարձուցած էր իւր թուղթերը եւ կը ջանար կարգը գտնել: Նահապետ-կայսրը սխալ հաշուած էր իւր զօրութիւնը. բժիշկները սխալած էին արդեօք. շուրջ վայրկեան մը, դարու մը չափ երկար, իւրաքանչիւր ոք կը թուէր սպասել եղբերական աղէտի մը. բայց ամեն ինչ յաջող գնաց: Նախարարապետն վար առաւ իւր աչերը, եւ իւր դէմքը վերստին պայծառացաւ, երբ Ուիլհէլմ կայսրը կրցաւ շարունակել իւր ընթերցումը: Ամպիոնէն վար իջնելու ատեն, կայսրն քայլ մ'առելի առաւ, եւ եթէ գետին չգլորեցաւ, պատճառն այն է որ յառաջիմական երեսփոխան մը, Պ. Լէօպէ, ընդդիմադիր կուսակցութեան անդամ մը զոր պաշտօնական լըրագիրը կը նախատեն յիշաւի թէ յանրաւի, իւր թեւերուն մէջ ընդունեց զայն»:

Փարիզի լրագիր մը, այս կտորն արտադրելէ յետոյ, ազգային հպարտութեամբ մը կը յիշէ Լուի Ժէրթ Թագաւորին սա խօսքը. զոր ուղղած է իւր նախարարապետին. «Սիրելիդ իմ Վիլհէլմ, Թագաւորի մը ներելի է մեռնիլ, բայց ոչ հիւանդանալ»: Եւ իւր մահուանէն վեց ամիս առաջ, 1874 մարտ 23ին, առկաւին անձամբ կը բանար Օրէնսդիր Ժողովոյ նստաշրջանը: Դժուարաւ յաջողեցաւ երթալ մինչեւ իւր թրինաթոռն, եւ հակառակ զգացուած երկիւղներուն, կրցաւ իւր Թագաւորի պաշտօնը կատարել ամբողջովին: Արքայական ճառն լսելի եղաւ բոլոր ներկայներէն, որք հաւաքուած էին Լուվրի մեծ սրահին մէջ:

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

23 ՓԵՏՐՈՒԱՐ-1 ՄԱՐՏ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Բեղրապուրկէ կը հեռագրուի առ թան, մարտ 5 թուով. — Երբքին դործոց Նախարար Դոստոյ կոմսը Լիւլատիա կ'երթայ, ութ ամսուան արձակուրդ մը վայելել հոն: Հրաժարական մատուցած էր Կայսեր, անձնական վատառողջութեան պատճառաւ: Չարն ընդունեց: Բայց խնդրելով որ Դոստոյ կոմսն ինք որոշէ զիւր յաջորդ: Հրաժարեալ նախարարը Բեղրապուրկ կանչեց Կուրքոյ զօրավարն, որոյ քաղաքական հիմնադիրը սակայն հաճելի չեղաւ Չարին, որ Դոստոյ կոմսէն խնդրեց պահել զիւր պաշտօն, ութ ամսուան արձակուրդ մը տալով նմա իւր առողջութեան կազդուրման համար:

— Վիէննական թերթեր, իրենց վերջին թիւերով, կարծիք կը յայտնեն թէ Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ կռիւ մը մտաւորաւ է: Արդէն որոշուած է Հերաթայ գրաւումն, եւ Ռուսք, նմանօրինակ պարագայից մէջ իրենց հանրածանօթ ճարտարութեամբ, շուտով պիտի հնարեն այնպիսի միջադէպեր ու պարագայներ, որք զիւսանադիտական լեզուով պիտի կրնան արդարացում մը համարուիլ որոշուած շարժումն ընելու Հերաթայ վրայ, որ աւելորդ է ըսել թէ « պատերազմի պատճառ » պիտի նկատուի Անգլիացոց կողմէ:

— Ամերիկացի Տոքսոր Թաննըր բժիշկն, որ հանրածանօթ է քառասնօրեայ ծոմովը, կենդանի է դեռ, եւ ըստ վերջին լրոց, դացած է Նոր-Մեքսիկա, նորահաստատ կըրօնային աղանդի մ'անդամակցելու:

— Օտէսայէ իւետր. 28 թուով կը հեռագրուի առ թայֆ. — Գրոյցներ կան թէ ժանտառեղի (Էֆֆոյ) սաստիկ մէկ տեսակը ճարակիլ սկսած է ի Քիէֆ, ուր այս միջոցիս կը համախմբին տարեկան մեծ տօնավաճառին առթիւ վաճառականներ երկրին ամեն կողմերէ, ճակնդեղէն հանուած չաքարի առեւտրոյն համար գլխաւորապէս:

Կըսուի նաեւ թէ առեւտրական դործերն յոյժ անդոհացուցիչ վիճակի մէջ են հոն, ի հարաւային Ռուսիա շաքարի առեւտրոյն անկման պատճառաւ, եւ կը վախցուի թէ քանի մը սնանկութիւնք տեղի պիտի ունենան ի մօտոյ, իրրեւ հետեւանք առեւտրական այս անդոհացուցիչ կացութեան:

— Սերպիոյ մէջ եւս ուշադրութիւն կ'ընծայուի յանուն Մակեդոնիոյ ըստածներուն: Սերպիոյ մէջ կան « մակեդոնացի Սերպեր » որք այս օրերս ի Պելլրատ պիտի համախմբուէին ի խորհրդակցութիւն: Սերպերը կ'ողջեն այս խնդրոյ մէջ յոյն (եւ հետեւապէս թուրք) տարրին կողմը բռնել, պուլղարական բաղձանքներն եւ սոսնձութիւններն ի դերեւ հանելու նպատակաւ:

— Պիզմարը իշխանին թերթը, Նոր Ծայլէ Ալկէսիէ Զայրուսի, կը հրատարակէ շատ խիստ յօդուած մ'ընդդէմ անգլիական դիւանագիտութեան, առիթ առնելով այն իրողութենէ թէ, արեւմտեան-հարաւային Ափրիկէի գրաւմանց վերաբերող Կապոյթ Տեպուիին մէջ, որ հրատարակեցաւ վերջերս, Լորտ Կրանվիլ իւլյս ընծայած էր Պիզմարը իշխանին եւ անգլիական դեսպան Սըր Մայքլի միջեւ յունուար 25ին տեղի ունեցած խօսակցութիւն մը, որ, Նոր Ծայլէ խօսքով, դաղտնի մնալու սահմանուած էր:

Կէս-սլաւոնական թերթն այս առթիւ կը պարսաւէ Ալեքսանդրիոյ ռաբակոճումն յԱնգլիացոց. կը բաղդատէ Անգլիոյ ընթացքն ի հիւսիսային Ափրիկէ, որ Օսմանեան հող մ'է՝ եւրոպական դաշնագրերով երաշխաւորեալ, ի Քամէրուն Գերմանիոյ բռնած ընթացքին հետ. կը վերջացնէ ըսելով թէ անգլիական դիւանագիտութեան անխորհրդապահութիւնք, որոց նպատակն էր հիւսիսային Ափրիկէի եւ Քոնկոյի դործոց մէջ կասկածներ առթել Ֆրանսայի, չը պիտի հասնին իրենց նպատակին, որովհետեւ Ֆրանսա վստահութիւն ունի Գերմանիոյ քաղաքական սլարկեղծութեան վրայ:

— Գերմանիոյ Նրեսվիտանական Ժողովն ընդունեց կառավարութեան խնդրած վարկըն՝ արտաքին դործոց պաշտօնատան մէջ երկրորդ դիւանագետի մը հաստատման համար, վարկ՝ որ մերժուած էր երկրորդ ընթերցմամբ:

—Ֆիլատելիայէն հետեւեալ տեղեկու-
թիւնները կը հաղորդեն առ թայժ, Միացեալ
Նահանգաց նորընտիր Նախագահ Պ.
Քլիվլենտի իւր պաշտօնին գլուխն անցնե-
լուն առթիւ :

Յ Մարտ. — « Նորընտիր Նախագահ Պ.
Քլիվլենտ երէկ մեկնեցաւ Ալպանի քաղաքէն ,
եւ երկաթուղով Ուաշինկոն հասաւ այս
առաւօտ : Իւր որդած նոր Նախարարը եւս
Ուաշինկոն հասան :

« Նախագահական հաստատման հանգիստը
տեսնելու համար խուռն բաղնիսթիւն կու-
գայ ամեն կողմէ ի մայրաքաղաքն : Հարա-
ւայինք մեծ մաս մը կը կազմեն այցելուաց
մէջ : Կը կարծուի թէ այցելուաց թիւը կէս
միլիոնի պիտի հասնի : Հանրապետական ,
այսինքն Տէմոքրատիկ գլխաւոր ան-
դամք եւս կուգան , 28 տարիէ հետէ առա-
ջին անգամ առիթ ունենալով իրենց կու-
սակցութեան պատկանող Նախագահի մը
հաստատումը տեսնել : Շատ Հանրապետա-
կաններ ալ կուգան այն յուսով թէ Պ. Քլիվ-
լենտ պիտի ձանքէ հասարակապետական
պաշտօնատարներն եւ զիրենք անուանէ :

4 Մարտ. — « Նախագահին հաստատման ա-
րարողութիւնը յաջողապէս կատարեցան ի
Ուաշինկոն : Օղը պայծառ էր եւ փողոց-
ները լի էին , մանաւանդ Բէնսիլվանիա պո-
ղոտայն , որոյ մէջէն անցաւ թափօրը : Բա-
զում շէնքեր զարդարուած էին շքեղապէս :
Ամբողջ ծախահարութեամբք եւ քաջալե-
րական աղակներով կ'ընդունէր զինուորա-
կան եւ քաղաքական գլխաւոր մարմինները :
Պ. Պ. Արթիւր , Քլիվլենտ եւ Հէնտրիքս ,
մինչ Կապիտոլ կ'երթային , շարունակ «կեց-
ցէ»ներով եւ ծախահարութեամբք ողջունե-
ցան բոլոր գծին վրայ :

« Երբ Պ. Քլիվլենտ բեմն ելաւ հանդիսա-
ւոր երդումն ընելու , առ նուազն 50,000
հանդիսատեսը խռնեալ կային բեմին դի-
մաց , Կապիտոլի ընդարձակ դետոնյն վրայ :
Պ. Քլիվլենտ Աստուածաշնչոյ վրայ երդում
ըրաւ , որ ճշդիւ ա'յն Աստուածաշնչն էր ,
զոր իւր մայր ընծայ տուած էր իրեն , երբ ,
տակաւին վեչտասանամեայ պատանի , ծը-
նողական տունէն պարտաւորուած էր մեկ-
նիլ ապրուստ փնտռելու :

« Պ. Քլիվլենտ դոյր ըրած էր իւր բանա-
խօսութիւն , զոր արտասանեց կամաց կա-

մաց , որոշ եւ հնչուն ձայնիւ :

« Կէս օրէն յետոյ ժամը չորս էր , երբ Պ.
Քլիվլենտ հասաւ Սպիտակ Տուն , եւ գոր-
ծոց գլուխն անցաւ պաշտօնապէս :

Ն Ե Ր Ք Ի Ն

Մայրաքաղաքիս ամերիկեան դեսպան
Ուալլէյս զօրավարն հրաժարական տուաւ
իւր պաշտօնէն , Պ. Քլիվլենտի Միացեալ
Նահանգաց Նախագահ ընտրուելուն պատ-
ճառաւ :

—Ներքին գործոց նախարարութիւնը
չնորհակալեաց գիր մ'ուղղեր է առ կուսա-
կան Քարքերքի , այն գործունէութեան
համար զոր յիշեալ պաշտօնատարը ցոյց կու-
տայ կամուրջներու եւ խճուղեաց շինու-
թեան մասին :

—Մոնթէոր Օրիանթալ կ'իմանայ թէ
Անգլիոյ Թագուհւոյն երրորդ որդին՝ Քո-
նոթի դուքսն յառաջիկայ ապրիլ ամսոյ մէջ
մայրաքաղաքս պիտի գայ : Խլխանը Վեհ.
Սուլթանին հիւր պիտի լինի :

—Նախարարաց խորհուրդն երեքշաբթի
օրն յարտասովոր նիստ գումարեցաւ ի Բ.
Դուռն : Իսթէրն Լքսքրէս հետեւեալ տե-
ղեկութիւնները կը հաղորդէ այս գումար-
ման վրայ որ կէս օրին Կայսերական պա-
լատէն զրկուած բարձրագոյն հրամանի մը
համեմատ տեղի ունեցաւ :

Բաց ի օրուան քանի մը կարեւորագոյն
խնդիրներէ , որոց վրայ խորհրդակցեցան
Նախարարը , օրինակի համար՝ Ալպանիոյ
վերջին խռովութիւններն , եւ Սեւանիկի
նորընտիր կուսակալ Հագգը փաշայի աքը-
ռելիք հրահանգները , մասնաւոր խորհըր-
դակցութեան առարկայ եղեր է այն Մի-
ջագգային Յանձնաժողովն որ պիտի գու-
մարի ի Փարիզ , Սիւէզի ջրանցին խնդրոյն
համար :

Յանձնաժողովոյ առաջին նիստը վերջ-
նապէս ամսոյս 16ին որոշուած է : Մեծ տէ-
րութիւնը միայն ներկայացուցիչ պիտի ու-
նենան :

Մեծ տէրութեանց պատուիրակներն օ-
րոշուած են արդէն եւ թէպէտ Յանձնաժո-
ղովոյ մասնակցող տէրութեանց իւրաքան-
չիւրն իրաւունք ունի իւր հարկ դատածին

չափ պատուելիքակ, կարգել, սակայն մէկ ճայն միայն պիտի ունենայ, ինչ որ ակնին իւր պատուելիքակաց թիւն:

Յգիպտոս եւս, կրտէ Էքսքրէս, իրաց բնական կարգաւ խնդրոյն մէջ շահ ունեցող կողմանց մին լինելով, մեծ տէրութիւնը խնդրած են Բ. Դրանն որպէս զի այդ երկիրն ալ իւր ներկայացուցիչն ունենայ Յանձնաժողովոյն մէջ: Բ. Դրանն դիտողութեան վրայ, Յգիպտական պատուելիքին իբր Օսմանեան պատուելիքի պիտի նկատուի: Արդէն շատ հաւանական է որ Յանձնաժողովոյ նախագահութիւնը Թուրքիոյ յանձնուի, իբր գերիշխան պետութիւն:

Նախարարաց խորհուրդը, բաց ի այս խնդիրներէն, նկատողութեան առեր է նաեւ, Յգիպտական պարտուց նկատմամբ Բ. Դրանն ինչ ինչ վերապահմանց մասին մեծ տէրութեանց պատասխաններն. այս վերապահումներն են՝ 1. Առաջարկեալ փոխառութեան պայմանագիրը Կայսերական հաւանութեան ենթարկել. 2. Օսմանեան պատուիրակ մը կարգել Յգիպտական պարտուց Յանձնաժողովոյն մէջ, եւ 3. Սիւէզի ջրանցին պաշտպանութեան մասին Բ. Դրանն վերահաստատական իրաւունքը ճանչնալ:

Տրիպոլիոյ գործոց վիճակն եւս խորհրդակցութեան առարկայ եղեր է:

— Պոմպէյի եւ Մատրասի մէջ քոլերային վերատին ծագման պատճառաւ, Յգիպտոսի առողջապահական Վարչութիւնն որոշեր է այդ գաւառներէն եկող ապրանքայ եւ ուղեւորաց համար քարանթինա հաստատել:

Միանգամայն որոշուեր է բժշկական քննութեան մ'ենթարկել ի Սիւէզ, Կարմիր ծովու ափրիկեան եղբրքէն եկող բոլոր նաւերն:

— Ժամանակէ մ'ի վեր գաւառաց մէջ ձեռնարկուած մարդահամարի գործողութեանց տուեմաները ցարդ մայրաքաղաքս ղրկուած չլինելով, ներքին գործոց նախարարութեան կողմանէ հրաման ղրկուեցաւ բոլոր գաւառաց որպէս զի փութացնեն զանոնք:

— Զորեքշտեթի առաւօտ Յունաց Ամեն Պատրիարքը Ռուսիոյ դեսպանատունն երթալով տեսակցեցաւ Վսեմ Դեսպանին եւ նորա խորհրդական Պ. Օնուի հետ, վերա-

բերմամբ պուկար Մետրապոլիտներու Պէրթներու խնդրոյն:

— Երկու օրէ ի վեր Մէճիտիէներու դինը բարձրանալու վրայ է, այսինքն ոսկին մէճիտիէ դրամով 107ի իջած է: Ասոր պատճառը սա է թէ՝ Օսմանեան Կայսերական Պանքան եւ Քրէտի Լիոնէ դրամատունն սկսած են շատ մը մէճիտիէներ գնել անգլիական զօրաց անսականաց վճարման համար, որպէս զի առեւտուր ընելու դիւրութիւն ընծայուի զօրաց:

— Ալպանիացի Բ. Դուռն հասած վերջին տեղեկութեանց նայելով, Լիււմայի ապստամբք ցրուեր են ի լուր Վէյսէլ փաշայի զաւտեան որ ութ վաշտ զօրաց գլուխն անցած Զրոսոֆիա կոչուած տեղն հասեր եւ անտի Բրիգէնտ մտեր է:

Միւս կողմէ Բրիգէնտի Ալպանիացի բռնակիչք հեռագիր մ'ուղղեր են առ Բարձր Սպարապետն Օսման փաշա, որով բացարձակապէս կը բողբէն իրենց հայրենակցաց յանցաւարտ ընթացքին դէմ, յայտնելով թէ անոնք մոլորեր են նենգաւոր համուզումներով եւ այս շարժման անվիջական եւ խիստ կերպով ջնջումը կը խնդրեն: Աղերսարկուք այս առթիւ կ'արտայայտեն միանգամայն համայն Ալպանիոյ ժողովրդեան՝ Կայսերական գահուն նկատմամբ տածած հաւատարմական եւ անձնութեան զգացումներն:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Մշոյ Ս. Կարապետի վանուց միաբանութենէն տասն վարդապետաց ստորադրութեամբ նամակ մը հասնելով ի Պատրիարքարան, Ամեն Խրիմեան Սրբազանի վանահայրութիւնը կը խնդրէ, թուելով Նորին Սրբազնութեան բարեմասնութիւններն եւ ժամանակաւ վանքին մատուցած ծառայութիւնները:

— Երուսաղէմի պարտուց բարձման նորակազմ Յանձնաժողովը շարժուա գումարուելով, հրաժարեալ լիազօր Յանձնաժողովոյն բոլոր պաշտօնական թղթերն ու տուեմանները կնքեալ ընդունեց Պատրիարքական Գեր. Տեղապահ Հօրմէն:

Յանձնաժողովոյ ներկայ անդամք որոշե-

ցին վերստին գումարիլ, իրենց Դիւանը կազմելու եւ գործի ձեռնարկելու համար :

— Տիգրանակերտէն Աղղ. Պատրիարքարան հասած հանրագիր մը տխուր դոյներով նկարագրելով գաւառին աղղ. գործոց վիճակն, արժանաւոր առաջնորդական տեղապահի մը կամ առաջնորդի մը առաջումը կը խնդրէ ստիպողապէս :

— Դարձեալ Տիգրանակերտէն հասած նամակ մը՝ Տիգրանեան Մկրտիչ եպիսկոպոսի անդ գտնուելուն դէմ ժողովրդեան դժգոհութիւնն յայտնելով, կը խնդրէ որ ղեկավարած սրբազանը Մակարայեցւոց վանքը ղրկուի :

— Սղերդէն առնուած բազմաստորագիր հեռագիր մը տեղւոյն առաջնորդական տեղապահ Նեվրուզեան Յովհաննէս վարդապետի դէմ այլ եւ այլ դանդառներ յայտնելով պաշտօնանկութիւնը կը խնդրէ :

— Այս չորեքշաբթի Խառն ժողովն գումարեցաւ ի Ղալաթիա ընդ ատենապետութեամբ Վսեմ Մաքսուտ Սիմօն պէյի եւ հետեւեալ անօրինութիւններն ըրաւ .

1. Խորհրդակցելով կաթողիկոսական ընտրութեան համար Էջմիածնայ Սինոդի վերջին պաշտօնագրոյն նկատմամբ Աղղ. Ժողովոյ բանաձեւին վրայ, որոշեց նոր առաջարկ մը ներկայել Աղղ. Ժողովոյն :

2. Պատրիարքական ընտրութիւնը վաւերացնող Կայս. Իրաւէին մինչեւ ցարդ յապաղման պատճառաւ որոշեց Թագրիր մը գրել առ Բ. Դուռն, զատկական տօնը վերահաս լինելով, Պատրիարքի ներկայութեան պէտքը նշանակելով :

2. Նկատողութեան առնով Պանտրմայէն հասած հանրագիր մը, սկզբամբ ընդունեց Պանտրմայի աթոռանիստ քաղաք լինելն, եւ պանտրմայի ու Պալքէսէրի առաջնորդական տեղւոյն տնտեսական զՏ. Մովսէս վարդապետ Աթոյիքեան, պաշտօն տալով նմա որ նախ եւ առաջ քննութիւն մը բանայ Պանտրմայի եւ Պալքէսէրի տեղական հանգամանայ եւ բնակչաց թուոյն վրայ, տեղեկագրէ առ Աղղ. Վարչութիւնն եւ Կայս ըստ այնմ առաջնորդական ընտրութեան ձեռնարկէ :

4. Նկատողութեան առնով Պաղտատէն հասած հեռագրերն, որոշեց հեռագրաւ հարցնել տեղւոյն Առաջնորդական Տեղա-

պահ Փիլիպոսոս եպիսկոպոսի թէ ստոյգ է եկեղեցւոյն վատկիւն, թէ քահանայներն ի՞նչ յանցանք զաղբեցուցած է, ելն :

5. Որոշեց հրահանգ տալ Շապին-դարահիսարի Առաջնորդ Տ. Պետրոս վարդապետ Ներկարարեանի, որպէս զի տեղւոյն ժողովներն ի նորոյ կազմակերպէ, եւ կամ պակասեալ անգամները լրացնելով, տեղեկագրէ առ Վարչութիւնն ի վաւերացումն :

6. Ընդունեց Եւդոկիայ Առաջնորդ Տ. Ներսէս վարդապետի խնդրքն, որ էր առժամապէս Կ. Պոլիս գալ, անձնական տրւել արութիւնը պարմանելու համար :

7. Ազրիանուպոլսոյ Առաջնորդական Տեղապահ տնտեսանց զՏ. Մեսրոպ եպիսկոպոս Սուքիասեան :

— Վերջին սուրհանդակով Էջմիածնէն առնուած մասնաւոր նամակէ մը կը տեղեկանանք որ, Էջմիածնայ Ս. Սինոդի ներկայ Պրովորորը բարձրագոյն հրամանաւ հրաժարելով իւր պաշտօնէն, ի Տիգրիս երկրորդ գրաքննիչ պիտի նշանակուի : Իսկ նորա տեղ պիտի ընտրուի Մանասիրցեմ, որոյ հայրը ուսու եւ մայրը հայ եղած է : Մանասիրցեմ իւր կրթութիւնն առած է Լաւարեան ձեմարանի մէջ եւ սաստիկ հայատեաց բնաւորութիւն ցոյց կուտայ : Մինչեւ այժմ ի Տիգրիս գրաքննիչն պաշտօն կը վարէր, իւր գործի մէջ միշտ կասկածոտ եւ սոսկանաւորակ է եւ այն յօդուածներ, զորս միւս գրաքննիչներն հրատարակելու արտօնութիւն կուտան, Մանասիրցեմ գրաքննչական կարմիր մելանով վերէն ի վար կը գծէ գանտեր :

— Նիկիոմիդիոյ Ալմալու եւ Սապանճա գիւղերու Թագ. Խորհրդոց ստորագրութեամբ երկու գրեր հասած են ի Պատրիարքարան, որք գոհութեամբ յիշատակելով գաւառին առաջնորդ Գեր. Ստեփան Ծ. Վարդապետ Յովակիմեանի տառնամայ պաշտօնավարութիւնը, վաւիպը կը յայտնեն չբաժնուիլ իրենց բարեակրտ առաջնորդէն :

— Երեւանէն մեզ կը գրեն. — Նովոյէ Ա. բաղրէնիէ անցեալ օր գրում էր թէ հասարակութեան իմանումները թէ Երեւանի դատարանի դատաւնաղ Ֆրէյդանտ որ Երեւանի մի քանի անձների արքայական աշխատողներից մէկն է եղել, իւր մեղադրութիւնները հաստատել է մի այնպիսի մարդի վկայու-

Թիւնով որին ինքը երեսուն բուրով կաշառել է: Բացի սրանից լրագիրը գրում է որ ուրիշ շատ հաստատ ապացոյցներ ունի Պըրոկուրորի անարդար գործերը յայտնելու: Պրոկուրորին անմիջապէս կանչեցին Թիֆլիս: Տեսնենք ինչ հետեւանք կ'ունենայ:

— Միացեալ Ընկերութեանց տարեկան սլաւահանդէսը տեղի ունեցաւ այս չորեքշաբթի գիշեր ի Բերա: Հայկական Նոր Թատրոնը չքեղապէս զարդարեալ էր արտաբնական և իներքուստ: Թատերաբեմին վրայ կը ծածանէին մահիկն եւ Օսմ գինանշաններն, եւ Օսմ դրօշներ կը զարդարէին թատրոնի երեսն եւ օթեկաց ճակատը: Գեղեցիկ լապտերներ, գոյնզգոյն շարժներ ու դրօշներ, դափնիներ, մրտենիներ եւ ուրիշ գարնանաւէտ կանանչեղէններ կը ծածանէին ընդարձակ սրահին ամեն անկիւնն, եւ հոյալէն տաղաւարի մը երեւոյթը կուտային թատերաբեմին որոյ խորը զետեղեալ էր նըւաղածուաց խումբը:

Հայ ընկերութեան պատուաւոր եւ կենցաղագէտ մասը ժամադիր էր եղած Միացեալ Ընկերութեանց պարահանդիսին մէջ: Դիմակաւոր պարուհեաց գոյնզգոյն զգեստները, զանազան ժառանգներու, երկիրներու եւ ազգերու տարազներով շինուած, յորս Հայաստանի տարազներն եւս արժանապէս ներկայացուած էին, ակնապարար տեսարան մը կը կազմէին: Մեծ դադարի միջոցին Վիճակահանութիւնն 'ը կատարուեցաւ որ արտադրեց իբր 30 ոսկի հաւասոյթ: Պարերը տեւեցին մինչեւ առաւօտ մեծ ոգեւորութեամբ:

Պարահանդէսի զուտ հասոյթը կը հաշուի 1000 ոսկեղ չափ:

— Ազգային ժողովն, որ իւր անցեալ շաբթուան նստին մէջ որոշած էր մասնակցիլ կաթողիկոսական յառաջիկայ ընտրութեան, այս ուրբաթ օր դարձեալ ի դռնփակ նիստ գումարուելով, կաթողիկոսական խնդրոյն վրայ իբր երեք ժամ խորհրդակցելէ յետոյ հետեւեալ բանաձեւն ընդունեց 4 ի դէմ 26 քուէով:

(Բանայեւ)

1. Թուրքիոյ Հայոց Ազգային ժողովն կը մասնակցի կաթողիկոսական ընտրութեան 1884ի եղանակաւ:

2. Համագումար ժողովոյ եւ Ազգային ժողովոյ անցեալ տարուան կատարած կաթողիկոսական ընտրութիւնները նոյնութեամբ կ'ընդունի Համագումար ժողովոյ եւ օթն ընտրեկաց ցանկը լրացնելով վիճակաւ դուրս մնացեալ եպիսկոպոսին (այսինքն Ամեն Յաւուրութիւն Սրբազան Վեհապետեանի) անուամբ, եւ Ազգ. ժողովոյ եռանուն ցանկն որ պակսած է Հոգեւոյս Տ. Տ. Ներսէս Ա. Պատրիարքի վախճանելովն, լրացնել նոյն եռանուն ցանկէն դուրս առաւելագոյն քուէ ստացող եպիսկոպոսին (այսինքն Գեղ. Աշքեան Խորէն Սրբազանի) անուամբ»:

Ժողովն յառաջիկայ նստին մէջ պիտի դրաղի ի Ս. Էջմիածին զրկուելիք պատուիրակութեան խնդրով:

— Երէկուան սուրհանդակով Էջմիած. նէն ստացուած նամակէ մը կը տեղեկանանք թէ Սուրիաո Էպիսկ Պարզեան որ Ռուսիոյ Հայոց վարժարանաց խնդրոյն համար Բեդրագուրի գնացած էր, առ Սի. նոդն դրած նամակի մը մէջ խօսելով այն մասին թէ Կայսրը չբարեհաճեցաւ զինքը տեսնել և խնդիրքը լսել, ի մէջ այլոց կ'ըսէ թէ նախարարներն յայտարարեցին որ Կայսեր ստորագրած օրէնքը անվավեր լսելի և անգառնալի է: Սակայն Թիֆլիսի նախկին փոխարքայ Միքայէլ Նիքոլայեւիչ Մեծ-Իշխանը Պարզեան Սրբազանին յայտուած է որ կը բարեխօսէ Վեհ. Կայսեր մօտ, որ Հայերուն իրենց ուսումնարաններու վրայ գոնէ այնքան արտօնութիւն չնորհօր որքան կը վայելեն միւս հպատակ ազգերը:



ՀՐԴԵՆԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹԻՒՆ



NORTH BRITISH AND MERCANTILE Insurance company

ՆՈՐԹ-Յ ՊՐԻԹԻՇ ԷՆՊ ՄԷՐԲԵՐՆԹԱՅԼ

Լոնդոնյի և Էդինբուրգի ապահովութեան

Ընկերութիւն	Մնաց Լիւր
Արտօնեալ գրամագրութիւն	3,000,000
Բաժանորդագրեալ գրամագրութիւն	2,500,000
Վճարեալ	625,000
Պահանջներ գրամ հրդեհի պատահանումներէն	1,592,235
Կենդանի պատահանումներէն	3,841,194
Գէմ պահանջներ գրամ	6,058,429
Հրդեհի ճիւղէն հասոյթ	4,486,865
1883 տարւոյ	551,307
Կենդանի ճիւղէն հասոյթ	4,738,172
1883 տարւոյ	

NORTHERN Assurance company

ՆՕՐԹ-Յ ԷՐՆ

Լոնդոնյի և Էդինբուրգի ապահովութեան

Ընկերութիւն	Մնաց Լիւր
Բաժանորդագրեալ գրամագրութիւն	3,000,000
Վճարեալ	300,000
Պահանջներ գրամ հրդեհի պատահանումներէն	841,871
Կենդանի պատահանումներէն	4,778,300
Գէմ պահանջներ գրամ	2,890,171
Հրդեհի ճիւղէն հասոյթ	520,206
1883 տարւոյ	251,572
Կենդանի ճիւղէն հասոյթ	771,778
1883 տարւոյ	

Ստորագրեալ իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծանուցանէ թէ ինչն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի գրութեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի գէմ ապահովութեան մեծ գիւրութիւններ կը մատուցանէ:

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և գիւրութեան աւելնալովն ընկերութիւնն ալ կրնայ աւելի մեծաբուամբ ապահովութիւն բռնողներու ինքզինքը ներկայացնել:

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մտակալ քաղաքները, գիւղերն և գաւառները:

MARITIME

Insurance Cie limited of Liverpool

Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Միջազգային ապահովութեան ընկերութիւն

Դրամագրութիւն 500,000 Անգլիական փրա

Ստորագրեալը, շոգենաւներու և առաջատանաւերու մէջ ի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ:

Գիններուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուղղութեամբ պէտք է գիտնի կալաթա, Քովիսթոն խանի անկիւնը երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակին, առ:


Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յիշեալ Ընկերութեանց

ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ

ՄԷՅՏԵԼ ԵՒ ՆԱԻՄԱՆ

ՏՐԷԶՏԱ. [ՍԱ.ԲԱՆՈՒՄ.]

Ներդրողի մէջ կա.
րի մեքենայ չինող
ամենամեծ գործա-
րանն :



Գործարանատեսար.ք
«Օրէթէնաւ Սաքսոնիա
Րէճիա» կոչուած հրու-
շակաւոր ձեռքի մե-
քենայիւն :

ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ

Ընտանեաց համար
ձեռքով և ոտքով բա-
նող մեքենայք :

ՆԱԻՄԱՆ մեքենայն B

Մոտիվներու և
դերձակներու համար
մեքենայք :



Այս մեքենայն իւր թելին տակ
լայնիկէկ տեղ մ'ունի, ինչպէս նաև
ամեն տեսակ կարերու համար նո-
րանոր գործիքներ, և շատ դիւ-
րութեամբ լաւ

ՕՂԱԿ

չինելու համար մասնաւոր գոր-
ծիք մը :

Այդ մեքենային համար աչ-
խարհիս ամեն կողմ արտօնու-
թիւն տունուած է :

Ծանօթ. — Այդ ԿԱՏԱՐՆԼՈՒԹԻՒՆԸ չափած՝ կարի մեքենայ մի՛ գնէք :

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆ



ԳՈՐԾԱՐԱՆԻ ԶՐԻ ԿՈՒՍՈՒՑՈՒՄ

Ընտանեաց համար օղակի գործիք դ՛ւ 75

Դերձակաց » » » » 125


Թուրքիոյ և Պուրկարիոյ համար

գործակալ և մթ երանոցապետ

ԷՄ. Ժ. ՄԷՐՃԱՆՕՅ

Կ. Պոլիս, Հաճօրուլու խան, Թիւ 17

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆ



Ամեն տեսակէն 1500 մեքենայ միշտ պատրաստ կը գտնուին :

Սրտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵՒԻ ԼՐԱԳՐՈՅ